

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԱՐԺԵՅԱՄԱԿԱՐԳԸ

Նոր սերնդի տեսանկյունից



Համագործակցություն
հանուն ժողովրդավարության
կենտրոն

2007

The Changing System of Values in Armenia

The Outlook of the New Generation



**Գիրքը տպագրվել է Նիդերլանդների թագավորության կառավարության
ֆինանսական աջակցությամբ**

The Publication is financed with the assistance of the Government
of the Kingdom of Netherlands

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բողոքական մշակույթի վերածնունդը Հայաստանում կամ ի՞նչ անել ազատության հետ
Վահրամ Սողոմոնյան

Հայաստանը տրանսֆորմացիոն ինքնության լաբիրինթոսում
Էրիկ Բաղդասարյան

Հայ ինքնության դիտարկումը էպիկական կենսաշխարհում
Աննա Ժամակոչյան

Մաքուր հայության քննադատություն
Գեորգ Հակոբյան

Երիտասարդական քաղաքականության դերը Հայաստանի և Եվրամիության միջև՝ միջմշակութային հա-
ղորդակցության գործընթացում
Ջինաիդա Սալիբեկյան

Գլոբալացման գործընթացը և արժեքների ընդհանրացման հնարավորության խնդիրը
Մարիամ Մովսիսյան

Արտաքին ազդեցությունները և
մշակութային արդի գործընթացները ՀՀ-ում
Համլետ Մելքունյան

Հայաստանի արժեհամակարգի փոփոխման միտումներն ու դրան նպաստող գործոնները
Կարեն Բաղայան



Վահրամ Սողոմոնյան

Դոկտոր Վահրամ Սողոմոնյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետի գերմաներենի բաժինը: 2002-2006թթ. աշխատել է Մարբուրգի Ֆիլիպս համալսարանի Քաղաքագիտության ինստիտուտի «Եվրոինտեգրացիա» հետազոտական խմբում: 2005-ին նա արժանացել է «DAAD 2005» մրցանակին՝ «Եվրոպական ինտեգրացիան և հեգեմոնիան Հարավային Կովկասում» քաղաքական թեմայով գերազանց դոկտորական աշխատանքի համար:

Բողոքական մշակույթի վերածնունդը Հայաստանում կամ ի՞նչ անել ազատության հետ

Ինչպիսի՞ն է մեր՝ հայերիս ինքնությունն այսօր: Որո՞նք են այդ հայկական ինքնությունը բնորոշող արժեքները: Հաշվի առնելով պատմական երկարատև ժամանակաշրջանում մշակութային բազմապիսի ազդեցությունների փաստը՝ թերևս դժվար չէ նկատել, որ հայկական առաքիլություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, իսկ արժեքային պատկերացումներն էլ անճանաչելիորեն փոխվել են: Այս առումով ակնհայտ է, որ հայկական ինքնությունը խորը վերահիմաստավորման կարիք ունի: Առավել ևս, որ ունենք ազատություն, սակայն մեզնից շատերը դեռևս չգիտեն, թե ինչպես վարվել դրա հետ: Եվ ընդհանրապես, ի՞նչ է հայերիս համար ազատությունը, ու կարո՞ղ ենք արդյոք մենք այլ կերպ նայել սրբացվող կամ ավանդական համարվող արժեքներին:

Պահպանողականության այլընտրանքը

Նկատի ունենալով հայ հասարակական ու գիտական մտքի բազմազանությունը՝ անհամատեղելի է թվում հայկական ինքնության սահմանափակումը բացառապես պահպանողական մտածողության շրջանակներում, ինչն այսօր դարձել է գերիշխող: Մեր օրերի Հայաստանում պահպանողականությունն ամենուր է, իսկ ցանկացած նոր գաղափար անպայման հարկ է լավ թաքցնել պահպանողականության քողի տակ, որպեսզի այն հաջողության շանսեր ունենա:

Ընդ որում, պահպանողականությունն արտահայտվում է ոչ միայն արժեքային պատկերացումների, այլ նաև **կաշառակերության ցանցերի**, որոշակի **ներքին կախվածությունների ու գործելակերպի** պահպանման, **մեղմիտ, գավառական մտածելակերպի** ամրապնդման ձևով՝ դրանով իսկ պայմանավորելով Հայաստանի մեկուսացումը: Կարծրատիպերին տուրք տվող ու կաղապարներից ձերբազատվել չփորձող հասարակությունն էլ ավելի է օտարում իր ներսում ծագած այլակարծիք տարրերին, ու այդպիսով, մեր և օտարների մոտ կեղծ պատկերացում ստեղծում հայկական ինքնության մասին: Բոլոր դիտարկումները ցույց են տալիս, որ **Հայաստանում սկզբունքային հակասություն կա ընդունելի համարվող արժեքների և կենցաղի միջև:**

Մինչ այդ կենցաղի որոշ նիստերին անդրադառնալը, նշենք, որ մեր հասարակության կենտրոնական հիմնախնդիրը **անարդարության գիտակցության բացակայությունն է**, ինչն իր ուղղակի արտահայտությունն է գտնում նաև առօրյայում:

Վերոնշյալ կենցաղի ամենակարևոր տարրերից մեկը **հայ կնոջ կերպարն է**: Մի կողմից աստվածացվող «**կնամեծար**» և հարանման այլ արտահայտությունները, մյուս կողմից՝ այսպես կոչված «**հնազանդ**» բնութագրումը, թույլ են տալիս ամենատարբեր ձևերով սահմանափակել կնոջ իրավունքները, ավելին՝ նույնիսկ խաղալ նրա բարոյականության հետ: Միաժամանակ հայտնի է, որ կնոջ ինքնադրսևորմանը խոչընդոտող հասարակությունները պարզա-

պես չեն զարգանում: Մեր գիտակցության մեջ առայժմ դժվարությամբ է արմատավորվում **ինքնուրույն և անկախ որոշումներ կայացնող կնոջ կերպարը**: Այսպես նվազեցվում են կնոջ հավակնությունները, իսկ հավակնություններ չունեցող կինն էլ վաղ թե ուշ անհետաքրքիր է դառնում տղամարդու համար, և այլ տեղում մարմնական սիրո պահանջի բավարարումը դառնում է անխուսափելի ու ինչ որ տեղ՝ նույնիսկ պարտադիր:

Կենցաղի մյուս կարևոր բաղադրատարրը երաժշտությունն է. անորակ ու անճաշակ, և միջև վերջ զլած այն երաժշտությունը, որ **քաղաքացիների համատարած հնագանդության ներքո** լսում են ոչ միայն հանրային տրանսպորտի վարորդները, այլև շատ հասարակական գործիչներ: Ինչպես հայտնի է, երաժշտությունն ազդում է մարդու մտածողության վրա: Անկախ մշակութային պատկանելությունից (արևելք-արևմուտք) ու որակից, շատ ավելի կարևոր է ուշադրություն դարձնել **այդ երաժշտությանը բնորոշ աշխարհայացքին և բովանդակությանը**: Հայկական արդի երաժշտության մեջ գերակշռում են **մելամադձոտ երանգները, ստատիկ ու անկյանք կատարումները, և միօրինակությունը**: Դա էլ ավելի ակնառու է դառնում, երբ այն համեմատում ենք ասենք՝ Եվրոպականի և նույնիսկ ռուսականի ու ինչ որ տեղ նաև արևելյանի հետ: **Լուսավոր կետերի մամուլող հատուկեմտ կատարողները** մեծ ջանք են գործադրում ընդհանուր այս պատկերի ֆոնին կենդանի երաժշտության նոր որակ ստեղծելու ուղղությամբ: Հետաքրքիր է նաև, որ հայ կատարողները դեռևս առաջին ճիգերն են գործադրում Հայաստանից դուրս (ոչ հայկական սփյուռքում) ընկալելի դառնալու ուղղությամբ: Այս ամենն էական է այն առումով, որ **երիտասարդությանը մատուցվում և զովազդվում է մի կենսակերպ, որն իր տխուր տոնայնությամբ, աշխուժության և ավյունի իսպառ բացակայությամբ, բոլորովին խորթ է 21-րդ դարում դինամիկ փոփոխվող աշխարհին**: Դժվար չէ կռահել, թե դրսի և Հայաստանի համեմատությունն ինչու է շատ երիտասարդների համար լինում հենց դրսի օգտին:

Արժեքների և կենցաղի միջև առկա հակասությունների գործնական մեկ այլ օրինակ էլ կարող է լինել այն իմիջը, որով ձգտում են ներկայանալ հայ տղաների և աղջիկների գերակշիռ մասը: Գլխավորը նրանց համար արտաքին տեսքն է, իսկ ներքին արժեքները երկրորդական են: Հաճախ այս գիծն առաջ է գալիս նաև հասարակական ոլորտում, երբ արտերկրին ներկայացվող պատկերն էականորեն տարբերվում է ներքին օգտագործման մեկնաբանություններից:

Արժեքային պատկերացումների բախումը Հայաստանում տեղի է ունենում նաև կապիտալի կուտակման գործընթացում ներգրավված մի քանի գործարար խմբակցությունների միջև: Մի բան է սեփական գաղափարներ չներդնող «բազարային կապիտալիզմը», միանգամայն այլ բան՝ **կապիտալի կուտակումն ու շրջանառությունն ապահովող արտադրական ու գիտատար տնտեսություն խթանող կապիտալիզմը**: Դժվար չէ կռահել, որ սա նույնպես մշակութային և աշխարհայացքային խնդիր է, երբ գործարարի գործունեության շառավիղը սահմանափակվում է ռեստորանային համալիրների կառուցման և օտարերկրյա արտադրանքի ներկրման տիրույթով:

Միայն բարձրահարկ շենքեր, ճանապարհներ և թանկարժեք իրերի խանութներ կառուցելով ազգերը չեն զարգանում: Ավելի առաջադեմ և մրցունակ տնտեսակարգի ստեղծմանը միտված սոցիալական արդարության նոր ձևերի ու գաղափարների, քննադատական մոտեցումների ներդրումն է թույլ տալիս դիմանալ գլոբալիզացիայի գնալով ահագնացող ճնշմանը:

Այս ամենից հետևում է, որ հայկական միջավայրում էական փոփոխությունների հասնելու համար առնվազն բոլորովին այլ մշակութային մոտեցում է անհրաժեշտ, որի սաղմերն առկա են Հայաստանում:

Չնայած վերը նկարագրված այդ կենցաղին, Հայաստանում **այլընտրանքային մոտեցումների և ազատության վերաիմաստավորման** լուրջ ներուժն առկա է: Ներուժ, քանի որ այն մինչ օրս չհասցնելով հասարակական կամ քաղաքական բնույթ ստանալ՝ մնացել է լուսանցքում: Մեր հասարակական գիտակցությունը կարող է համալրվել և հարստանալ **բողոքական էթիկայի** և հասարակական ոլորտն ընդգրկող **քննադատական մոտեցման ավանդույթի** ձևավորման գործընթացով:

Բողոքականությունը Հայաստանի համար անծանոթ երևույթ չէ: Մի կողմ թողնելով մինչև օրս հայկական հանրության մեջ ծագած բողոքական հոսանքների առանձնահատկություններն ու Եվրոպայում դրանց ազդեցության տարածման փաստերը, հարկ է նշել, որ **միջնադարից մինչև հայկական լուսավորչության սաղմերն ու 20-րդ դարի 60-ականները հասնող սոցիալական և մշակութային շարժումներն** ակնհայտորեն բողոքականության տարրեր են պարունակել: Ընդհանրապես բողոքական էթիկան մի կողմից (ըստ Մաքս Վեբերի) վերածնն-

դից սկսած հանդիսացել է կապիտալիզմի ձևավորման գաղափարական ոգին, մյուս կողմից՝ մեծաթիվ ազդեցիկ սոցիալական շարժումներ առաջ են եկել բողոքականության հիմքի վրա:² Իսկ ինչո՞ւ պետք է արդեն իսկ պետություն ունեցող և նոր պետական ավանդույթ ձևավորող հայ ժողովուրդը հրաժարվի բողոքականության պտուղներից, որոնք մարդկության կյանքում անզնահատելի դեր են ունեցել: Հայերի կողմից բազմիցս վկայված ազատասիրությունը՝ նաև աշխարհայացքների բազմազանությունն ունենալու համարձակության մեջ չի կայանում արդյոք:

Ուրեմն ի՞նչն է պատճառը, որ հայկական այլընտրանքային ուղղությունները հարստացնում են այլ երկրների հասարակական խճանկարը, բայց չեն կարողանում տեղ գրավել Հայաստանում: Ընդհանրապես բոլոր տիպի հոսանքներն անհրաժեշտ է դիտարկել ազատության վերաիմաստավորման հոլովություն: Բողոքական մոտեցումը կարող է լինել այն լակնուսի թուղթը, որով կարելի կլինի ստուգել մեր ազգային արժեքների կենսունակությունն աշխարհում և ստեղծել նորերը:

Հայկական ինքնությունը եվրոպական արժեքային համակարգում

Մեր արժեքների նկատմամբ որևէ նոր մոտեցում ձևավորելուց առաջ՝ կարևոր է դրանց որոշակի կամ գոնե մոտավոր բնութագրում տալը: Այդ արժեքների տեղը պետք է որոնել մեզ առավել հարազատ եվրոպական արժեհամակարգում կամ դրա կողքին: Փորձենք դիտարկել մերօրյա հայկական արժեքները՝ օգտագործելով գերմանացի սոցիոլոգ Հանս Յոասի կողմից վերջերս ուրվագծված մի քանի արժեքների բավականին որոշակի սահմանումները, որոնք նա հատկանշական է համարում եվրոպայի համար:³ Ըստ այդմ, կարելի է պարզել, թե արժեքներից հատկապես որոնք են համընկնում մեր պատկերացումների հետ, և ինչ գծերով է մեր փոփոխվող ինքնությունը տարբերվում եվրոպականից, ինչը նույնպես բնականոն է:

Այդ արժեքներն են՝

- Ազատության գաղափարը (ազատության յուրահատուկ ըմբռնումը)

Հայերի համար ազատությունը պատմականորեն եղել է հիմնարար արժեքներից մեկը: Սակայն վերջին հազարամյակում արտաքին վտանգներից խուսափելու համար հայ հասարակության մեջ որոշակիորեն զոհաբերվել է ներքին ազատությունը: Նախորդ հատվածում բերված օրինակներից պարզ է դառնում, որ այսօր՝ ազատության գաղափարի ընկալման և կիրառման հետ կապված մի շարք խնդիրներ կան: Այդուհանդերձ, ազատության գաղափարն ամրագրված է ՀՀ Սահմանադրության ներածական մասում. «ազատասեր նախնիների սուրբ պատգամը», «ապահովելու համար սերունդների ազատությունը» ...

- Աշխարհին տիրելու պրակտիկ ռացիոնալիզմի առաջացումը (ըստ Մաքս Վեբերի)

Հայաստանում առկա է աշխարհի ուժեղների հետ մրցելու անկարողության կամ աշխարհաքաղաքական շահերի օբյեկտ լինելու որոշակի գիտակցություն, ինչը բնորոշ է հիմնականում գաղութատիրության համը ճաշակած երկրներին և հատկապես՝ Մերձավոր Արևելքին: Այս մտածողության հիմքում դրված է հետևյալ մոտեցումը. «Գերտերությունները իշխում են մեզ և ամեն ինչ կախված է նրանցից»:

Այս մոտեցումն, ըստ էության, բացառում է Հայաստանի ինքնությունն ուժային կենտրոն դառնալու հնարավորությունը և աշխարհում ռացիոնալ կերպով տնտեսական իշխանության կառույցների ստեղծումը: Իսկ միջազգային ասպարեզում հայկական ազդեցության տարածումն ընկալվում է ընդամենը հայ անհատների մեծ ձեռքբերումներով, որը չի դիտարկվում հայ հասարակության ենթատեքստում: Նման բարդույթի հաղթահարումը կապված է ինչպես աշխարհայացքի, այնպես էլ տնտեսական զարգացման նոր մակարդակի հասնելու հետ:

- Առօրեականի կարևորումը՝ ի հակադրություն ոչ առօրեականի սրբացման (սակրալիզացման): Գործընթաց, որը սկիզբ է առել 15-16-րդ դդ.-ում

Շատ հաճախ Հայաստանում հանդիպում ենք այս մոտեցման հակառակ դրսևորմանը: Առօրյան ընկալվում է որպես դժվար փոփոխելի, և այն ինչ կա, այդպես էլ պետք է լինի ու անիմաստ են այն փոխելու փորձերը: Դրա հետ մեկտեղ սրբացվում են ինչ որ վերացական գաղափարներ:

Բայց մյուս կողմից հայերի մոտ առկա է նաև անհատական ինքնադրսևորման ուժեղ ցանկությունն ու նյութական բարեկեցության հասնելու վառ արտահայտված ձգտումը: Այս փաստը նույնպես վկայում է այն մասին, որ առօրեականի կարևորումը անհատական մակարդակի վրա է, սակայն հասարակության առօրյայի ու, ըստ այդմ, իրավագիտակցության արժեվորման տեսանկյունից չի դիտարկվում:

- Ընդունելի կամ հանդուրժվող բազմազանության և պլյուրալիզմի ավանդույթը

Ընդհանրապես հանդուրժողականությունը հայկական մշակույթի կարևորագույն առաքի-
նություններից է: Դա արտահայտվում է թե շրջապատող երկրների հետ համակեցության նպա-
տակով հանդուրժողականության ընդունելի ձևերի որոնման մշտական գործընթացի, և թե
քրիստոնեության հիմնական պատվիրաններից մեկը հանդիսացող հանդուրժողականության
գաղափարի տեսքով:

Սակայն անցյալում ու նաև ներկայում կարելի է հանդիպել անհանդուրժողականության մի
շարք դրսևորումների: Դրանք նկատելու համար բավական է ուշադրություն դարձնել արտա-
քինով տարբերվող, ինչպես նաև այլակարծիք անձանց նկատմամբ առօրյայում դրսևորվող
վերաբերմունքին: Իսկ հանդուրժողականությունը ժամանակակից ժողովրդավարական հա-
սարակություններին հատուկ հիմնարար արժեք է և Հայաստանում դեռևս արմատավորման
կարիք ունի:

**- Ներքնաշխարհի նկատմամբ ռեֆլեքսիվ դիրքորոշումը (այսինքն՝ մի կողմից ներք-
նաշխարհի կարևորում, մյուս կողմից՝ դրա գործունակությունը վտանգող գծերի պատ-
ճառով ներքնաշխարհի հարաբերականացում):**

Հայաստանին հատուկ պատմական ուղու արդյունքում անհատը ներկայումս վեր է կանգ-
նած պետությունից: Սակայն նման անհատապաշտությունը չի ենթադրում ռեֆլեքսիվ վերա-
բերմունք սեփական ներքնաշխարհի նկատմամբ: Որքան էլ հակասական է, նույն այդ ընտա-
նիքն ու պետությունը ինչ որ առումով մերժում են մարդու ներքնաշխարհի կարևորումը: Այս
երևույթը նախևառաջ կապված է այն հանգամանքի հետ, որ անհատը չափազանց կաշկանդ-
ված է սոցիալական կապանքներով և հիմնականում անտեսվում են նրա անձնական ցանկու-
թյունները:

Ինչ վերաբերվում է գործունակությունը վտանգող գծերին, ապա այս տեսանկյունից ներք-
նաշխարհի հարաբերականացումը բնորոշ է հայկական մտածողությանը:

**- Ինքնադրսևորման (ինքնարտահայտման) արժեքի կարևորումը (18-րդ դարից սկ-
սած), ինչը որոշիչ դեր է ունեցել 60-ականներից հետո ծագած մշակութային շարժում-
ների համար**

Մարդու ինքնադրսևորումն արգելակող խոչընդոտները հանդիսանում են մեր հասարակու-
թյան կարևորագույն հիմնախնդիրը և արտագաղթի հիմնական խթանիչը: Ընդ որում, դրանց
պատճառները ոչ այնքան տնտեսական են, որքան կապված են անարդարության գիտակցու-
թյան և քաղաքական կամքի բացակայության հետ:

Ինքնարտահայտման արժեքի թերընկալումը նաև նրանով է պայմանավորված, որ դեռևս
արժանվույնս չեն իմաստավորվել թե 60-ականների շարժումները Հայաստանում, թե նաև Ար-
ցախյան շարժումը՝ որպես արժեհամակարգի վերափոխմանն ուղղված սոցիալական շար-
ժում, և միջազգային նշանակության իրադարձություն:

**- Եվ վերջապես, վերը թվարկված այս բոլոր արժեքների հարաբերականացումը գա-
ղութատիրության և ամբողջատիրության պատմության արդյունքում**

Այս հարաբերականացումն ամեն դեպքում բնորոշ է հայկական մտածողությանը:

Ի դեպ, հաշվի առնելով Հայաստանի դիրքը եվրոպական քաղաքակրթության և Արևելքի
միջև, կարևոր է նաև, թե ինչ դեր է ստանձնում մեր արժեհամակարգը մշակույթների այս խաչ-
մերուկում: Եվրոպական հասարակությունը դառնալու դեպքում նույնպես առկա են մարտահ-
րավերներ: Մի դեպքում՝ վտանգ կա, որ Հայաստանը կարող է էլ ավելի փակվել և ընդգծել իր
տարբերությունները Արևելքի ու մահմեդական երկրների նկատմամբ: Մյուս դեպքում՝ կարող է
օգտվել այն հանգամանքից, որ Եվրոպան «բաց նախագիծ» է ու կանխել եվրոպական ինքնա-
սահմանազատման կամ ինքնագովերգման միտումները և խթանել մշակութային հանդուրժո-
ղականությունը՝ միևնույն ժամանակ ռացիոնալ մոտեցում որդեգրելով Հայաստանի հասարա-
կական զարգացման ոլորտում:

Ըստ էության, այս կամ այն արժեքին դավանելու հարցը ոչ թե ձևականորեն եվրոպացի ճա-
նաչվելու խնդիր է, այլև սեփական ինքնությունը վերագտնելու միջոց: Այլապես Եվրոպային
ինտեգրվելու մեր ձգտումները, հավի թռիչքի են նմանվում, երբ հախուռն ոգևորությանը հա-
ջորդում է այդ բոլոր պարտավորությունները կատարելու չկամությունն ու հոգնածությունը,
ինչպես նաև ցանկությունը, որ մեզ հանգիստ թողնեն: Ի դեպ, եվրոսկեպտիցիզմի և եվրոէյֆո-
րիայի փուլերը հատուկ են նաև Եվրամիության հին անդամ երկրներին, սակայն դրանց քաղա-

քացիները երբեք կասկածի տակ չեն դնում իրենց պատկանելությունը եվրոպական քաղաքակրթությանը:

Քննադատական մոտեցումը հայկական իրականության մեջ

Քննադատական ձիրքով օժտված ժողովուրդ համարվելով՝ մեզ այնուամենայնիվ պակասում է հասարակության կողմից ակնկալվող և ընդունվող այն քննադատական մոտեցումը, որը կլինեի նպատակային և հավակնություն կունենար վերածվել քննադատական դպրոցի: Այդ քննադատական մոտեցման ավանդույթի զարգացումն այժմեական է, նախևառաջ, հետևյալ կարևոր ուղղությունների համար:

Քննադատություն՝

- մեր պատմության ավանդական մեկնաբանությունների,
- սոցիալական արդարության ձևերի և տնտեսաձևի (գերհարուստներ, ծայրագույն աղքատություն, անապահով խավի հեռանկար),
- ընտանիքի ձևավորման ավանդական պատկերացումների և վերափոխվող ընտանեկան կառույցների,
- անհատի անկախության և նրա ինքնարտահայտման համար լիարժեք ազատության ապահովման ոլորտներում:

Եվ վերջապես քննադատական մոտեցումն անհրաժեշտ է կիրառել **փոփոխվող արժեքների և վերաիմաստավորվող հայկական ինքնության** նկատմամբ: Այն պետք է մշտապես վերաքննության ենթարկվող և դինամիկ զարգացող առարկա լինի հայ հասարակության ու հասարակագիտության համար:

Պետական ավանդույթը և հայերի նոր ինքնագիտակցությունը

Այս ենթատեքստում անհրաժեշտ է փնտրել այն պատճառները, թե ինչու հատկապես այսօր մտավորականների այլընտրանքային խմբերին չի հաջողվում քաղաքական որակ ձեռք բերել: Այդ պատճառով է նաև, որ թույլ է ընդդիմադիր մշակույթը:

Ըստ էության, քաղաքական մտածողությունը դա **կարգերի կամ կարգուկանոնի մասին մտածողություն** է: Եթե չկան այն աստիճան քաղաքականացված մտավորականներ, որոնց այլընտրանքային պատկերացումները կարգերի մասին ինքնաբերաբար շարժումների կվերածվեին, ապա մնացած ամեն ինչ մնում է հարմարվողական մտածողության սահմաններում:

Հայի ինքնության համար միակ կայուն առանցքն ու խարսխման կետն այսուհետ կարող է լինել պետությունը՝ **հայկական ուժեղ պետությունը**: Իսկ հայրենիքի նկատմամբ սիրո դրսևորման ամենաարդյունավետ տարբերակը՝ **սահմանադրական հայրենասիրությունն է**: Միմիայն սահմանադրության դրույթների կիրառման նկատմամբ մշտական հասարակական վերահսկողությունն ու դրանց կենդանի քննարկումները կարող են Հայաստանի քաղաքացիներ ձևավորել:

Պետական ավանդույթի շրջանակներում ձևավորված այլընտրանքային գաղափարական հոսանքների ընդգրկմամբ է նաև պայմանավորված է տվյալ պետության հզորությունը:

Հայաստանակենտրոն նոր գաղափարական այլընտրանքի ձևավորումը միաժամանակ թույլ կտա՝ խուսափել օտարերկրյա այս կամ այն մշակույթի գերիշխող ազդեցությամբ պատրաստի հասարակական կարգավորման մոդելների ներմուծումից: Շուտով ահագնանալու է ինչպես հայկական սփյուռքի, այնպես էլ համաշխարհային հանրության Հայաստանի վրա բանեցվելիք մշակութային ճնշումը: Ենթադրաբար, հասարակությունն իր մեջ փակվելու դեպքում՝ պարզապես կվերածվի դրսի ուժային կենտրոնների փորձադաշտի:

Իսկ ժամանակն արդեն չի սպասում, և պարտադրում է վերաիմաստավորել արժեքները, քանի որ արժեքը կենսունակ է, եթե այն անընդհատ ստուգման ու քննադատության է ենթարկ-

վում՝ հասնելու համար ճշմարիտ կենսակերպին: Եվ ուրեմն՝ ամեն ինչ ենթակա է քննարկման՝ անգամ ամենաթանկ արժեքները:

Եզրահանգում

Ըստ էության, բողոքականությունն ու ընդվզումը առավելապես բնորոշ են երիտասարդությանը: 30 տարեկանից սկսած, հատկապես ընտանիք կազմելուց հետո, պահպանողականությունը դառնում է անխուսափելի: Այնպես որ, շատ բան կախված է հենց այդ շրջանից: Հասարակության զարգացումը չի կարող տեղի ունենալ միմիայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ պետք է գա նորը և այդ նորը պետք է համալրի եղած արժեքները, այլ ոչ թե ստիպված լինի դուրս գալ Հայաստանից:

Այդ տեսանկյունից է որոշիչ դառնում ազատության հետ վարվել սովորելն ու դրանից օգուտներ քաղելը: Սակայն մեր հիմնարար արժեքները խոցելի են, եթե մենք սահմանափակում ենք այդ ազատությունը, իսկ ազատության բազմաթիվ դրսևորումներն էլ քննադատական վերանայման չենք ենթարկում: **Այս դեպքում հայաստանյան արժեհամակարգը դառնում է թերարժեք, թե մարդու ազատությունը գերակա համարող եվրոպական համայնքի տեսանկյունից, և թե քաղաքակրթական այլ ավանդույթներ դավանող արևելյան հարևանների համար:** Բարեբախտաբար այսօր մենք ստիպված չենք զոհել մեր ներքին ազատությունը հարևան երկրների հետ լավ հարաբերություններ ունենալու համար, եթե, իհարկե, ինքներս կամավոր չվաճառենք այդ ազատությունը:

Այսպիսով, ազատությունն ու քննադատական մշակույթը սերտորեն փոխկապակցված են: Բողոքական մշակույթի արժեվորումն ամենևին էլ ինքնանպատակ չէ: Այն կարող է օգնել վերափնաստավորել մեր ինքնությունն ու վերագտնել այդ ինքնության տեղը փոփոխվող աշխարհում և տարածաշրջանում, ու նոր ինքնագիտակցությամբ նայել Հայաստանի միջազգային մրցունակության հեռանկարին:



Էրիկ Բաղդասարյան

Քաղաքագետ: Ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

Հայաստանը տրանսֆորմացիոն ինքնության լաբիրինթոսում

Անցումային փուլը քաղաքականության, տնտեսության մեջ և անկախ պետության կայացման շրջանը չէին կարող իրենց հետքը չթողնել հասարակության արժեքային համակարգի վրա: Ինչպես ավանդական, այնպես էլ խորհրդային պայմաններում ձևավորված արժեհամակարգը գնալով կորցնում է իր մրցունակությունը: Դրան մեծապես նպաստում է հինը ժխտելու և հակադրության մեջ դնելու սովորությունը, որը հատկապես ակնառու էր անկախության առաջին տարիներին, և որը կարծես, խրախուսվում էր պետության կողմից: Այն՝ ինչ արժե պաշտպանել կամ հանուն ինչի պայքարելու պատրաստակամություն է նկատվում, կոչվում է արժեք: Հասկանալով հասարակության արժեքները կոնկրետ ժամանակահատվածում՝ կարելի է որոշել նրա ինքնությունը:

Այսօր արդեն հստակ է, որ սոցիալական արդարության, կոլեկտիվ փոխօգնության, ընդհանուր շահի գաղափարները՝ որպես գիտակցված արժեքներ, չեն կիրառվում ոչ երկրի զարգացման ուղիների մշակման, ոչ էլ հանրային ինստիտուտների ձևավորման ժամանակ: Փոխարենը դրանք պահպանվելով ինտուիտիվ, պարզեցված մակարդակում, արտացոլվում են այնպիսի երևույթներում, ինչպիսին ասենք՝ համայնքային մտածելակերպն ու կվազիազգային գաղափարներն են: Սրանք իրենց հերթին փոխարինում են հասարակական գիտակցությանն ու պետական պատասխանատվությանը: Նման իրավիճակը ոչ միայն անակնկալ չէ, այլ նաև ինչ որ տեղ օբյեկտիվ է: Արժեքային համակարգերը շատ ավելի դանդաղ են տրանսֆորմացվում, ներառում արտաքին փոփոխությունները և ադապտացվում դրանց: Երբ հասարակությունը գտնվում է արժեքային կողմնորոշման փնտրտուքի մեջ, առավել ակտիվանում են ինքնության մասին բանավեճերը, առաջ են գալիս պատմական հիշողության դրվագներ, դրանց հիմքի վրա նաև՝ ազգային և հասարակական ինքնության վերածնակերպման փորձեր: Հասարակությունը ձևավորող մարդիկ գրեթե միշտ էլ կարիք են զգում նախահայրերի: Հերոսների, մեծանուն ու նշանավոր մարդկանց վերապահված դերերից մեկն էլ՝ հենց այդ պահանջի լրացումն է: Այստեղ կարևորություն է ձեռք բերում այն հարցը, թե ինչ տիպի անհատներ պետք է, ու ցանկալի է, որ հիշվեն: Կարևորվում է նաև, թե՛ նրանց գործունեության հատկապես որ կողմերը պետք է մատուցվեն հետագա սերունդներին: Այսինքն՝ մենք բախվում ենք անցյալի քաղաքական օգտագործումների հետ՝:

Ինչու՞մ սակայն առավել վառ կարող է արտահայտվել ինքնությունը: Հատուկ, ոչ սովորական, գուցե նաև ինքնատիպ կենսակերպի մեջ, միջանձնային փոխհարաբերություններում, որոնք համապատասխանում են հայերի՝ ճշտի և սխալի մասին ունեցած պատկերացումներին, որը կերտել է իրենց, և որը կերտվում է իրենց կողմից: **Մեր կարծիքով հայկական ինքնության առավել բնորոշ առանձնահատկություններից է՝ «այդ ինքնության մշտական փնտրտուքի հանդեպ ունեցած հակումը»²:** Դրանով այն բավական նման է *ընհանուր եվրոպական* ինքնություն ասածին, սակայն, մի էական տարբերությամբ. եթե եվրոպական ինքնությունը մանրագնի ընկալման է ենթարկվում ներկան հասկանալու և ապագան որոշելու համար, ապա մեր դեպքում՝ այն ուղղված է ներկան անտեսելուն և անցյալով քողարկելուն:

Ինքնության կերտումը և ընկալումը սերունդներ պահանջող, երկարատև գործընթաց է: Այն իր մեջ ներառում է ազդող գործոնների բազմաթիվ շերտեր՝ սկսած էթնիկ ընդհանրությունից ու կրոնից՝ մինչև պետական ինստիտուտները և քաղաքացիական հասարակությանը բնորոշ հարաբերությունները: Պատմության բերումով հայ ժողովուրդը զրկված է եղել նշված ազդակ-

ները կայուն կերպով ներմուծելու և դրանց գիտակցմամբ՝ սեփական ինքնության էվոլյուցիան ընկալելու հնարավորությունից: Կարելի է պնդել, որ դա եղել է դրվագային կերպով անջատված՝ և ժամանակի, և տարածության մեջ: Երկարաժամկետ հատվածում ազգի զարգացման ուղղությունը որոշելու և մեր ընկալմանը համապատասխան սեփական կառավարման փիլիսոփայություն ձևավորելու հնարավորություն մենք չենք ունեցել: Մասնատված լինելով միևնույն ազգի տարբեր հատվածների նաև տարածության մեջ, ստեղծել ենք ինքնության տարբեր ընկալումներ, հայրենիքի վերաբերյալ տարբերակված պատկերացումներ՝ դարեր շարունակ փորձելով այդ պատկերացումները ներդնել ողջ Հայաստանի ապագայի տեսլականում:

Հայ միտքը, գործելով Հնդկաստանում, Եվրոպայում, Կոստանդնուպոլսում, Ռուսաստանում կամ այլուր, միավորված է եղել կրոնաէթնիկ հիմքով, այնպիսի գործոնների կարևորմամբ, ինչպիսին ասենք՝ ծագումը, հայրենիքն ու անցյալն են: Լևոն Շանթը դրանք անվանում է հիմնական-բնական գործոններ, և դրանցով պայմանավորում ինքնության ևս չորս ստեղծագործական, կուլտուրական գործոններ՝ լեզուն, կրոնը, պետությունը և մշակույթը: Ի տարբերություն բնականների, ստեղծագործական գործոնները էվոլյուցիոն են և ձևափոխվում են զարգացմանը զուգընթաց: Սակայն, ինչպես ասվեց, դրանց լիարժեք դրսևորման և զարգացման համար պայմաններ չեն եղել և դրանք, դրսևորվելով հատվածաբար և անկայուն պոռթկումներով, հիմնականում չեն առաջանցել իրենց սկզբնական վիճակից:

Հենց այս հիմքով էլ սկսեց ձևավորվել հայ ժողովրդի քաղաքական ինքնությունը 19-րդ դարի վերջին՝ 20-րդ դարի սկզբին. գործընթաց, որը նույնպես՝ ցեղասպանության, խորհրդայնացման և հայրենիք-սփյուռք քաղաքական երկխոսության բացակայության հետևանքով չհասավ իր տրամաբանական եզրագծին:

Էթնոցենտրիկ ինքնության հիմքով ստեղծվեց, և ազգայնական քաղաքական գաղափարախոսությամբ ներկայացավ նաև ներկա պետականությունը: Ազգայնականության դերը կայանում է նրանում, որ այն միևնույն ժամանակ և քաղաքական ուղղություն է, և ձգտում է քաղաքական իշխանության և քաղաքականություն է, որն արդարացնում է այդ գործողությունները՝ ազգի շահերի սկզբունքի դոկտրինայով: Այստեղ աշխատում է «Ամեն ինչ ազգի համար, ոչինչ նրա դեմ» կարգախոսը: Էթնոցենտրիզմը որոշ չափով սահմանակից է էթնոէթնոկոմիս և էթնոմեկուսացմանը, թեև դրանք մի քիչ ավելի ծայրահեղ դրսևորումներ են³: Հասարակության մեջ արժեքային համակարգի փոփոխման պայմաններում ազգայնականության այս տիպը փորձում է լցնել արժեքային վակուումը: Մեր պայմաններում սակայն, այն առավելապես օգտագործվում է էլիտայի կողմից՝ սեփական դիրքի կորստյան վտանգը կանխարգելելու համար: ՀՀ պետական քաղաքականության առավել մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետության ռազմավարությունը և ազգայնական ուժերի հռչակած պատկերացումները բավական տարբերվում են: Օրինակ, նույն Եվրոպայում դժվար է պատկերացնել նույն գաղափարաբանության ազգայնական ուժերի կողմից տնտեսության հիմնարար կառուցվածքների «փոխանցումը» մեկ այլ պետության: Հայաստանի հասարակական քաղաքական զարգացումները վերլուծելով, ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը եզրահանգում է. «Հայաստանի Հանրապետության 15-ամյա գոյության ընթացքում ձևավորված կառավարչական համակարգի և հայ հանրության կարիքների ու պահանջների միջև հակասություն գոյություն չունի: Բացակայում է այն հասարակական խավը (կամ այն չի հասել այնպիսի վճռորոշ կետի), որը Հայաստանի զարգացման նոր գոյաբանության ձևավորման հիմք կհանդիսանար: Հանրության մեջ գերակա են հարմարվողականության տրամադրությունները, որոնք մասամբ բխում են օբյեկտիվ պատճառներից՝ պայմանավորված բնակչության աղքատության բարձր աստիճանով և կրթության ցածր մակարդակով: Քաղաքականությունում դիտվում է գաղափարախոսությունների ու ծրագրային մոտեցումների լիակատար բացակայություն, իսկ տնտեսությունում՝ առևտրի բուռն զարգացում, ինչը՝ իբրև բազային գործընթաց, բնորոշ է անգամ ոչ թե ինդուստրիալ, այլ մինչինդուստրիալ հասարակությանը: Այսինքն, անկախ պետությունը մեր էությունը չէ, մեր հանրության էությունը չէ⁴»: Իհարկե, ինքնության որոշման համար նման գնահատականը կարող է այսօրեական թվալ: Իսկ պետական զարգացումների վեկտորը կարող է վճռորոշ չդիտվել հայ մտքի կողմից ազգային ինքնության կերտման դարավոր գործընթացի ներքո: Սակայն միանշանակ է, որ «ազգային գաղափարը» խոցելի և թույլ է առանց այն պաշտպանող պետության, որն էլ հենց սահմանում է ազգի ինքնությունը: Իսկ պետությունը իր հերթին խոցելի է առանց ազգի ժամանակակից մոդելի, որը լեգիտիմացնում է առաջինի պահանջումները: Այստեղից բխում է, որ պետության առաջնահերթությունները կամա թե ակամա դառնում են վճռորոշ՝ նաև ազգային ինքնության կերտման մեջ: Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապե-

տությունը ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է հռչակված, որն արդեն իսկ հիմք է տալիս հասկանալու, թե ինչպիսի տեսլական ունի հասարակությունն իր մասին: Թեև այժմ մեր պարագայում կարելի է ասել, որ դեմոկրատական մասնակցության պակասի հետևանքով ազգայնականությունն է լցնում լեգիտիմության վակուումը, և փորձում ձևավորել համապատասխան ինքնություն, սակայն ինքնության ընկալումն ու գիտակցումը հասարակության կողմից պետք է միտված լինի ընդհանուր մարտահրավերներին դիմակայելուն, որոնք ժամանակակից աշխարհում, և պետության առկայության պարագայում չեն կարող լուծում գտնել միայն ազգայնականության շրջանակներում: Ինքնության մասնագետներից Կորնելիուս Կոստարիադիսը առանձնացնում է հասարակությունների երկու տեսակ: Առաջինը՝ «հետերոմոն» տիպն է, որի դեպքում մարդկանց գիտակցության մեջ առկա է այն համոզմունքը, թե հասարակական հիմնական ինստիտուտները ստեղծված են առնվազն ոչ իրենց կողմից ու իրենց մեջ ունեն վերին իմաստ, հետևաբար դրանք չի կարելի ոչ քանդել, ոչ էլ վերացնել: Երկրորդ տիպը՝ «ավտոնոմ հասարակությունն» է: Սրա էությունն արտահայտվում է նրանում, որ հասարակության նպատակները և միջոցները ենթակա են այն կազմող մարդկանց կամքին: Հին Հունաստանում դա արտահայտվում էր հետևյալ նախադասությամբ, որով սկսվում էին բուլոր օրենքները՝ «ժողովը և ժողովուրդը սա համարում են բարիք»: Հեղինակի կարծիքով հասարակության առաջին ձևը գիշում է իր դիրքերը, քանի որ դրա դեպքում հասարակությունները ուղղակի մրցունակ չեն և ժամանակակից պայմաններում ինքնության կերտումը՝ հեռանկար ունի միայն երկրորդ տիպի շրջանակներում: Անկախ տեմպերից Հայաստանը ընտրել է զարգացման եվրոպական ուղղությունը և ժամանակի ընթացքում համաձայնեցնելու է իր ձևափոխվող արժեքային համակարգը եվրոպական ընդհանուր արժեհամակարգին: Չնայած տարածված պատկերացումներին, եվրոպական ինքնությունը կազմող արժեքները չեն հակասում էթնիկ արժեհամակարգերին, քանի որ հանդես են գալիս իբրև իդեալական տիպ, որին պետք է ձգտել և բխում են մարդու մասին հումանիստական պատկերացումներից: Այդ արժեհամակարգի հիմնասյուներն են ռացիոնալությունը, արդարությունը և ժողովրդավարությունը⁵: Պետությունը կարող է և պետք լուծի իր առջև դրված խնդիրները նաև դրանց լուծմանը նպաստող առաջանցիկ ինքնություն ձևավորելու միջոցով և այդ գործը չբարդի միայն հասարակական կամ մեր պարագայում՝ համայնքային կառուցվածքների վրա: Որպես միջոց կարող են ծառայել կրթական և կառավարման համակարգերը: Առաջինի դեպքում կարևոր է ներառել հետևյալ հարցերը՝

■ Ազգային ինքնության դերը կրթական համակարգի կերտման մեջ և նրա ամրապնդումը՝

որպես պոտենցիալ նպատակ

■ Բաց հասարակության սկզբունքների ընկալումը և դրանց հարաբերակցումը ներկայիս Հայաստանյան պայմաններին

■ Կրթության դերը հասարակության մեջ՝ քաղաքացիների կամ անհատների ձևավորման գործում

Կառավարման համակարգի դեպքում կարևոր է ռեֆորմներում նաև այնպիսի խնդիրներ ներառել, ինչպիսին ասենք՝ պետական ծառայողների մոտ մոտիվացիոն մեծ նպատակի ձևավորումն ու ներառումն է: Հարկ է նաև տեխնիկապես և պրոֆեսիոնալ պատրաստվածությամբ ձևավորել առավել ճկուն կառավարման համակարգ, որը որոշ չափով կլրացնի քաղաքական հատվածի լեգիտիմության պակասը և իներցիան՝ նպատակ ունենալով ստեղծել հասարակությանը համապատասխան ժամանակակից կառավարման համակարգ, որն էլ իր հերթին արժեքների յուրացման, հետևաբար նաև՝ ինքնության ընկալման յուրահատուկ ֆիլտր կհանդիսանա:

Ինքնությամբ զբաղվող հեղինակների մի մասի համոզմամբ՝ անցյալը փոփոխական է, այն կերտվում և վերակերտվում է ներկայի օգտագործման համար, ներկայի պահանջներինց ելնելով: Տեսաբանների մյուս խումբը գտնում է, որ կոլեկտիվ հիշողությունները վերապրում են հասարակության ներսում տեղ գտած փոփոխությունները, ավելին, նրանք պնդում են, թե անցյալն է, որ ձևավորում է ներկայի մասին մեր պատկերացումները և ըմբռնումները, և ոչ հակառակը: Հիշողության հարցերի դասական տեսաբաններից Մ. Հալբախի կարևորագույն ու բազմիցս կրկնվող դիտարկումներից մեկն այն է, որ հիշողությունը և դրա հիմքով ինքնությունը, շատ լայն առումով, անցյալի վերակառուցում է՝ ներկայից վերցրած տվյալների միջոցով⁶:

Չժխտելով երկու մոտեցումն էլ, մենք հակված ենք առաջինին, գտնելով, որ ինքնությունը՝ ստեղծվող ընկալման տեսակ է, որը պետք ուղղված լինի ապագային: Հայաստանն ունի հնարավորություն ձևավորել այդպիսին և դուրս գալ ինքնության փնտրտուքի լաբիրինթոսից:



Աննա ժամակոչյան

2004-ին ավարտել է ԵՊՀ Փրիլսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետը:
Սոցիոլոգիայի մագիստրոս:

Հայ ինքնության դիտարկումը էպիկական կենսաշխարհում

Իդեոտիֆիկացիան և արժատներ ունենալը մարդկային
կարևորագույն էկզիստենցիալ պահանջմունք է...
Յունանիստների դրույթներից

Ներածություն

Ազգային ինքնության էությունը և դիտարկման ուղղությունը մեծապես կախված են «ազգ» հասկացության ընկալման, սահմանման և ուսումնասիրման հանդեպ դրսևորվող մոտեցումներից:

18-րդ դարի վերջում՝ Մեծ հեղափոխությունից սկսած, Ֆրանսիայում ազատ քաղաքացիների հանրությունը բնորոշելու համար կիրառվեց «nation»՝ «ազգ» հասկացությունը, որը ենթադրում էր պետականության և պետական կազմի գոյություն: Այս նույն իմաստավորմամբ «ազգ» հասկացությունը հետագայում անցավ անգլերենի մեջ: Ժամանակակից աշխարհում ազգություն, հասարակություն և տարածք հասկացությունները պարզապես նույնանում են. «ազգ»-ը միջազգայնորեն կիրառվում է «պետական հանրության» նշանակությամբ¹:

Գերմանիայում պատմական զարգացումներն այլ ընթացք ունեին և այստեղ պետականության ձևավորումը հիմնվեց լեզվական, մշակութային ընդհանրության ու տարածական մերձավորության վրա: Այդ իսկ պատճառով էլ Գերմանիայում մինչ օրս «ազգ» հասկացությունը կիրառվում է «ժողովուրդ» էթնիկական իմաստով:

Հայերիս մեջ ևս «ազգ» հասկացության ընկալումն ունի կենցաղամշակութային, լեզվական ընդհանրության հիմքը, սակայն այս դեպքում ռեալ տարածքի՝ որպես ժամանակակից բնակավայրի ընդհանրությանը փոխարինում է՝ պատմական տարածքների ընդհանրությունը: «Ազգ» հասկացության հայկական ընկալման վերլուծության համար հետաքրքիր տեղեկատվություն է տալիս նաև բառի ստուգաբանությունը: Հայերենում, ըստ Աճառյանի, *ազգը* նշանակում է *ցեղ, սերունդ, գերդաստան, ժողովուրդ, իրերի տեսակ* և այլն: Այն փոխառվել է պահլավերենի *azg` ճյուղ* ձևից, որը ծագել է հնդեվրոպական նախալեզվի *azgho* ձևից: Մինչև ժամանակ Աճառյանը *ազգ* բառին նույնիմաստ է համարում *ազն* բառը, որն իր հերթին *անձն*՝ անձ, բառի կրկնակն է (անձ -> գ). «անձն»-ը մասնակի է, իսկ «ազն»-ը հավաքական իմաստ ունի²: Ստուգաբանական տրամաբանությունից հետևում է, որ անձ-ը և ազգ-ը հարաբերում են որպես ես-ինքնություն և մենք-ինքնություն կրող սուբյեկտներ: Այսպիսով, *ազգ* բառը իր մեջ ներառում է մենք-ինքնության բազմաթիվ մոդուլներ՝ սկսած ընտանեկան-տոհմայինից մինչև ժողովուրդ-ազգություն: Ընդ որում, հայերիս ազգանվան՝ «ազգի անվան» մեջ ևս դրսևորվում է այդ ընտանեկան-տոհմային մոդուլը:

Այսպիսով, «ազգ» հասկացության ընկալման տարբերությունների հիման վրա «ազգային ինքնության» մեջ առանձնացվում են երկու մոդելային տիպեր՝ *էթնոմշակութային ինքնություն* և *քաղաքացիական ինքնություն*, որոնցից մեզ բնորոշը առաջին տիպն է: Քաղաքացիական ինքնության ձևավորումը արդեն գոյություն ունեցող էթնոմշակութային ինքնության հիմքի վրա խիստ արդիական է մեզ պես նորաթուխ պետականություն ունեցող և պետական զարգացման հավակնող երկրի ու հասարակության համար: Այնուհանդերձ, քաղաքացիական ինքնության ձևավորման արդյունավետության բարձր աստիճանը հնարավոր է ապահովել էթնոմշակութա-

յին ինքնության՝ որպես համատեքստի ըմբռնման պարագայում միայն: Ըստ Խորենացու, հայերի՝ իդեալական վիճակից դեպի քաոս տարերային անկումների հիմնական պատճառն այն է, որ հայերն անգիտակ են իրենց համակեցական արքետիպերին, ուստի և անկարող կիրարկելու դրանք իրենց կյանքում³: Ուրեմն՝ ինքնաճանաչումը կարևոր միջոց է նաև ժամանակակից պատմական փուլում՝ մարտահրավերներին դիմակայելու և նոր զարգացումներին ընդառաջ գնալու համար: Իսկ հայ էթնոմշակութային ինքնության խիստ բազմազան ընկալումների խնդիրը հանգեցնում է ուսումնասիրության համար նպատակահարմար ընդհանրական հիմքերի որոնման այժմեականությանը: Այս իմաստով ազգային մտավոր-ստեղծագործական արժեքները ներկայանում են որպես համակեցությունն ամբողջականացնող սիմվոլիկ տեքստեր, որոնք ընդհանրացնող միջոցներով արտահայտում են հանրության կենսաաշխարհի բովանդակությունը: Դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս ճանաչել ոչ միայն անցյալի անցյալականությունը, այլև ներկայությունը, քանի որ էթնոագագային ինքնության արմատները և իմաստավորումները դրսևորվում և բացահայտվում են ազգային-մշակութային ստեղծագործություններում:

Ազգային մշակութային այդպիսի ստեղծագործություններից է «Սասնա ծռեր» էպոսը, որը վիպական-առասպելական ստեղծագործություն լինելուց զատ, իրենից «Մենք»-ի կենսաաշխարհի իրական և իդեալական նկարագրությունների համադրության մասին հարուստ տեղեկատվական աղբյուր է ներկայացնում: Այստեղ մշակութայինները, ունենալով սուբյեկտիվ իմաստավորումներ, հիմնվում են Մենք-ի սեփական կենսափորձի վրա. դրսևորվում է «հայության» Մենք-ինքնության համակարգը իր բոլոր բաղադրիչներով, այդ թվում՝ Մենք-իրականն ու Մենք-իդեալականը:

Հայոց Մենք-ինքնությունը «Սասնա ծռեր» կենսաաշխարհում

Բոլոր ժողովուրդների հերոսավեպերի նման, «Սասնա ծռերը» նույնպես ներառում է ինչպես առասպելական-հեքիաթային, համամարդկային-արքետիպային, այնպես էլ պատմական-իրական ու ազգային-կարծրատիպային ծալքեր: Էպիկական կենսաաշխարհում Մենք-ինքնության ուսումնասիրման տեսակետից արժեքավոր են ազգային-կարծրատիպային և պատմական շերտերը:

«Սասնա ծռերում» էպիկական կենսաժամանակն ընդգրկում է հայ դյուցազնական տոհմի չորս սերունդների՝ Սանասարի և Բաղդասարի, Մեծ Սիերի, Դավթի և Փոքր Սիերի կենսագործունեությունը նախորդող-նախապատրաստող և ներառող ընթացքը: Իսկ էպիկական Մենք-ի կենսատարածության սահմանները սկզբում ձգվում են Հայաստանի երկայնքով և հետագայում՝ առաջին իսկ ճյուղում, տեղափոխվում առավել լոկալ գոտի՝ Սասնա Տուն: Այս տարածաժամանակային չափումներն ունեցող **էպիկական իրականությունը դրսևորվում է որպես՝ հայոց Մենք-ի և Օտարի անընդհատ փոխգործողությունների միջոցով համաարարվող կենսաաշխարհի, որտեղ գործում են Մենք-ի ու Օտարի մասը կազմող, դրանք ընդհանրացված իմաստներով արտահայտող կերպարները՝ իրենց դերերով, գործողությունների հիմքում ընկած նպատակներով, և փոխգործողություններն ապահովող կանոն-օրենքներով:** Էպոսում ներկայացված Օտարները տիպավորվում են երկու հիմնական խմբի՝ **Բարեկամների և Թշնամիների**, ընդ որում, հիմնական առանցքային փոխգործողությունների կողմ են հանդիսանում վերջիններս, առանց որոնց հերոսավեպը չէր լինի հերոսական:

Էպոսում ի սկզբանե սահմանվում է Թշնամուն Մենք-ից զատող դոմինանտ հատկանիշներից մեկը՝ **դավանանքը**. «Ըսկիզբն էր կրոնապաշտ խալիֆան, մեկ էլ հայոց Գագիկ թագավոր»: **Խաչապաշտ և Կռապաշտ** ընդհանրացված գաղափարները տիրապետող հասկացություններ են՝ իմաստային խորը հագեցվածությամբ: Մյուս դոմինանտ սահմանագատող գործոնը **կենսատարածքն** է. «Կռապաշտ ալիֆան Բաղդադ կրնստեր, Գագիկ թագավոր՝ Բերդ-Կապուտին»: Մեր և Օտարի **փոխգործողությունները ուժերի չափման բնույթ ունեն**: Առաջին ճյուղում սահմանվում է նաև այս **ուժային փոխգործողության կանոնը**. «Էն ժամանակ ո՞ր թագավոր գորեղ լիներ, էն մեկելից հարկ կառներ»: Էպոսի սկզբում, քանի դեռ չեն ծնվել առաջին ճյուղի առանցքային հերոսները և դյուցազնական տոհմի հիմնադիրները՝ Սանասարն ու Բաղդասարը, Մենք-ի և Օտարի փոխազդեցությունն ընթանում է ուժային **անհավասարակշռության պայմաններում**, հետևաբար՝ Մենք-ի սահմանները խախտվում են, և հայոց արքա Գագիկի դուստր Ծովինարը կնության է տրվում Թշնամուն՝ Բաղդադի խալիֆային: Այս իրավիճակում դրսևորվում են կենսաաշխարհին հատուկ մի քանի կանոններ և առաջին հերթին **ամուսնության տարուն կռապաշտի**, որ նույնն է **Օտարի** ու տվյալ դեպքում նաև **Թշնամու** հետ:

Այս արգելքը, որպես էպիկական իրականության բաղադրիչ, գործում է նաև հետագա ճյուղերում նկարագրվող իրավիճակներում (Մեծ Սիերի և Դավթի ճյուղերում): Այս համատեքստում դրսևորվում է մեկ այլ կանոն ևս. **ինքնագոհողությունը հանուն Մենք-ի**՝ սեփական ես-ի կործանման սպառնալիքի պայմաններում. «Աղեկն էն է ես էրթամ, ուրիշ մարդու թող բան չըլնի: Ես մեկ ջան եմ էրթամ կորսվիմ, քանց մեր Հայաստան երկիր ավերի», և, որ ավելի կարևոր է՝ **ինքնագոհողության դրական սանկցիավորումը մշակույթում**. «Աղեկ է, որ աղջիկ մի վերջանա, քանց թե ազգ մի վերջանա»: Ինքնագոհողություն բնութագրող իրավիճակ է ներկայացնում նաև Մեծ Սիերի ճյուղում Արմաղանի «էրթմնակոտորության»՝ երդման խախտման նկարագրությունը, որի արդյունքում Սիերն ու Արմաղանը մահանում են իրենց ժառանգ Դավթին ունենալուց անմիջապես հետո: Ինքնագոհողության նպատակն այս դեպքում «տոհմի շարունակությունը», «օջախի ճրագը» պահպանելն է, որոնք արժեքային մեծ ծանրաբեռնվածություն ունեցող գաղափարներ են, և նույնանում են «ազգի շարունակության» և «հայրենիքի պահպանման» իմաստների հետ, հանուն որոնց էլ խրախուսվում է **ինքնագոհողությունը**: Այսպիսով, էպիկական իրականության մեջ ինքնագոհողությունն ու դրա մշակութային խրախուսումը տեղի է ունենում **Մենք-ի վտանգվածության** պայմաններում կամ, ինչպես մասնագիտական գրականության մեջ է կոչվում՝ «**հիդենտիֆիկացիոն խմբի վերացման վախի**» հիման վրա (հասկացությունը՝ Դենիս Սանդուխ):

Վերադառնալով թշնամի – Մենք հարաբերակցությանը, նշենք, որ թշնամին ևս ունի իր «Մենք»-ինքնության գատման և «Հայությանը» հակադրման բնական ընկալումը. «Աղջիկ մնա իր օրենքով, ես մնամ իմ օրենքով. չէ՞ մենք արաք ենք, դուք հայ»: Այս առանձնացումը, որ նկարագրվում է էպոսի առաջին ճյուղում, ունի նաև հայերի ճանաչման և ընդունման իմաստ, հայերը ոչ թե անօրեն են, այլ՝ ուրիշ օրենքի տեր: Էպոսում, սակայն, առկա է նաև թշնամու երկրորդ իմաստավորման եղանակը, որը դոմինանտ է էպիկական հետագա զարգացումներում: Այս թշնամու էությունը հիմնականում մարմնավորվում է կրտսեր Մսրա Մելիքի կերպարում. նա անհանդուրժող է հայ Մենք-ինքնության գոյության նկատմամբ, քանի որ դրանում տեսնում է պոտենցիալ վտանգ և սպառնալիք իր կարգավիճակի նվազեցման և իր ինքնության համար: Փաստորեն, էպոսում նկարագրվող թշնամանքի աղբյուրը հենց թշնամիների զավթողականությունն է և հայոց Մենք-ի կենսատարածքի ներխուժման հավակնությունները, այնինչ Մենք պատրաստ ենք հաշտվել նրանց հետ, եղբայրանալ, «արուն արնի խառնել», իսկ թշնամին եղբայրանում է միայն Մեր հզորության գերակայության մեջ համոզվելու դեպքում (ավագ Մսրա Մելիքի հաշտությունը Մեծ Սիերի հետ):

Այնուամենայնիվ, թշնամու կենսաշխարհին ևս վերագրվում են հայկական Մենք-ին հատուկ սիմվոլիկ բաղադրիչներ. նա ունի իր կրոնը, իր օրենքը, իր հրեղեն ձին՝ Քյախլան ձի, կամ Շամա ուղտը, նա ևս ձգտում է սեփական «օջախի» ծխի պահպանմանը, և այլ կերպ լինել չէր կարող, քանի որ դա **Մեր աշխարհընկալման ձևն է, կենսաշխարհի տրամաբանությունը**: Սակայն էպիկական իրականության Մեր ընկալումներում թշնամիներին հատուկ է ոչ միայն սեփական օջախի հիմնադրման և պահպանման ձգտումը, այլև հայերի օջախը քանդելու հավակնությունները. «Քո մեր քեզի մեռնի Մելիք, Մըսրա օջախ կանգնացուցես, հայու օջախ փչացուցես»:

Մեր հիմնական թշնամիները էպոսում ներկայացվում են որպես միջավայրում ամենաուժեղները: Սա թերևս նշանակում է, որ Մենք-ի բացառիկությունը ամենևին էլ չի նշանակում գերազանցություն Օտարի նկատմամբ: Թշնամին, լինի դա Առյուծ, թե Մսրա Մելիք, նույնպես գերբնական զորության սկիզբն ունի: Նույնիսկ թշնամու ամենախիտ հատկանիշներով օժտված կրտսեր Մսրա Մելիքի և ամենահաղթական հերոս Դավթի սերման ակունքներն են նույնանում, նրանք ծնվում են նույն հորից: Սակայն այդ բացարձակ իմաստով զորությունը ունի Մեր հզորությանը հակառակ՝ բացասական նշան:

Արդեն թշնամիների և նրանց հետ հարաբերությունների նկատմամբ ընկալումներում դրսևորվում է թշնամու վերաբերմունքն ու պատկերացումները Մեր նկատմամբ: Դրանք առանձնակիորեն արտահայտվում են նաև ամենաոխերիմ թշնամու՝ Մսրա Մելիքի մտածողության մեջ. «էդա ազգ հաստակող են, մարե, - էնի մեր գլխուն ցավ տ'ըլնի: Էնի հայ է, մենք արաք ենք, քո ծիծ մի տար էնոր»... «Մե'րիկ, - ասաց, - ախր չորակող են էդ ազգ. վախճամ Դավիթ պատիժ մի բերի մեր գլուխ»... «Օձու ձագ է Դավիթ, թե որ ինձի վնաս դիպնի, էդ տրդից է»: Հիմնական հատկանիշը փաստորեն **համառությունն** է, որը հանգեցնում է պոտենցիալ վտանգի ու իր մեջ **սպառնալիք** է պարունակում՝ հետագա ակտուալացման իմաստով:

Մենք-ինքնությունը ներկայացնող հերոսների և թշնամու փոխգործողություններն ունեն ելքի երկու հնարավորություն՝ **ոչ ոքի** կամ **հաղթական**, ընդ որում, ոչ ոքին ևս դիտվում է հաղ-

թական ելք (Մեծ Սիերի և ավագ Սարա Մելիքի կռիվը), քանի որ այս դեպքում Մենք ցուցադրում ենք Մեր ուժը և անկոտրունությունը, ինչն էլ բերում է թշնամու զավթողական նկրտումների կասեցմանը: Այս մեկնաբանությունը ակնհայտորեն տեսնում ենք նաև Ավարայրի ճակատամարտի ընկալումներում: Այսպիսով, հնարավոր ելքերը ստանում են **«բարոյական հաղթանակ»** և **«լիարժեք հաղթանակ»** իմաստները:

Հերոսավեպի ճյուղերը, թեև *իրենց հիմնական գաղափարի իմաստային ծանրաբեռնվածությամբ տարբեր են, հիմնական կառուցվածքներով նույնանում են*. բոլոր հերոսները, միմյանց հարակցված լինելով հոր և որդու հաջորդականության սկզբունքով, *ապրում են միևնույն էպիկական կենսաշխարհում և նույն օրենքներով, որտեղ միջավայրը ևս նույնանում է* իր հիմնական բովանդակությամբ: Հերոսների հատկանիշները, մանկության, պատանեկության նկարագրությունները, գործունեության ձևերը, ճյուղերում հիմնական թեմատիկ իրավիճակները՝ **բերդաշինություն, պայքար-կռիվ թշնամու դեմ, ամուսնություն և ժառանգի ծնում** (բացառությամբ վերջին ճյուղի), նույնիսկ կառուցվածքային առումով են նույնը⁴:

Այս չորս սերնդի էպիկական հերոսների և նրանց գործողությունների կամ նույնիսկ համանման գործողությունների իմաստավորումների միջև կան նաև տարբերություններ, որոնք էլ որոշում են ամեն ճյուղի հիմնական իմաստային ծանրաբեռնվածությունը: Այսպես, առաջին ճյուղում Սանասարի և Բաղդասարի հիմնական դերակատարումը Սասնա բերդի կառուցումն է, որն ունի **Տուն-Օջախ-Հայրենիքի հիմնադրման** խորհուրդը⁵: Բերդաշինության, եկեղեցաշինության և այլ կառույցների շինարարության նկարագրություններ ունեն նաև մյուս երեք ճյուղերը, որոնք սակայն իմաստային նույն հագեցվածությունը չունեն: Այսպես, երկրորդ ճյուղում այն իմաստավորվում է որպես *հայրենիքի հաստատումն ու պաշտպանումը, Մենք-ի «սահմանների» ընդգծումը* Սիերի կողմից, երրորդում այն *կորցրած ազատության և իրավունքների վերականգնման, վերահաստատման* խորհրդանիշ է, քանի որ Դավիթը *վերաշինում է* իր հոր վանքը: Փոքր Սիերի ճյուղում էլ ավանդաբար շարունակվող շինարարությունն ավելի թույլ արտահայտում ունի և ավելի շատ *անսահման ուժի ու հզորության* իմաստակիրն է:

Ամուսնության էպիկական իրավիճակների նկարագրությունները ևս առկա են էպոսի չորս ճյուղերում: Դրանք իրենց մեջ ներառում են առասպելական ու հեքիաթային մոտիվներ, սակայն դուրս չեն մնում ազգային խառնվածքի, հավատալիքների, ծիսական ու կենցաղային մանրամասների, Մենք-ի և Օտարի ընկալումների համեմատվածությունից: Սովորաբար հեքիաթները վերջանում են հերոսների հաղթանակով և գեղեցկուհու հետ ամուսնությամբ, սակայն վեպում ճիշտ հակառակն է: Այստեղ ամեն ինչ սկսվում է ամուսնությամբ, քանի որ այն ինքնանպատակ չէ, այլ ունի կոնկրետ՝ **դյուցազնական տոհմի սերման և շարունակականության ապահովման գործառույթ** (բացառությամբ Փոքր Սիեր ճյուղի): Ամուսնությունը հիմնականում և՛ Մեր, և՛ Թշնամու համար իմաստավորվում է իր գերնպատակային հետևանքով՝ **Հզոր ժառանգի ծնունդով**: էպիկական իրականության տրամաբանությունը պահանջում է, որ **ժառանգը հավատարիմ մնա ավաղական օրենքներին, կատարի հոր ուխտը, կրի նրա հերոսական հատկանիշները**, այդ թվում՝ ատրիբուտային սիմվոլները՝ **Քուռկիկ Ջալալին, Թուր Կեժակին, Խաչ Պատերազմին**, և նույնիսկ իր ուժով **գերազանցի հորը**, հակառակ դեպքում զավակը չունի ժառանգի իմաստը:

Ժառանգի ծնունդն իր հերթին ևս իմաստավորման տարբերություններ ունի ճյուղերում: Առաջին ճյուղում *Սիերը ծնվում է որպես ակնհայտ ժառանգ*, ինչպես նա, այնպես էլ հասարակությունը, գիտեն այդ դերակատարումը: Ժառանգի ծնունդը Սիերի ճյուղում տազնապային է. *արդյոք կծնվի՞ հերոս-ժառանգը*: Այս հարցը ինչ-որ չափով արտահայտվում է նաև վերջին ճյուղում, վերածվելով՝ *կվերադառնա՞ արդյոք հերոսը* հարցին, այսինքն՝ ըստ էության, *հայերի փրկության մասին տազնապը* շարունակում է մնալ էպիկական իրականության արդիական բաղադրիչ:

Ինչևէ, **Տուն-Օջախ-Հայրենիք** գաղափարին միանում է **ժառանգ** գաղափարը և դառնում երկրորդ ճյուղի *հիմնական իմաստակիրը*: Նախքան Դավթի ծնունդը այն արդեն դառնում է անհրաժեշտություն, և մյուս իրադարձությունները նախապատրաստում են դրան: Ծնվում է Դավիթը. **հայի ճրագն ու օջախը վառ է մնում**: Վեպի երեք ճյուղերն էլ ավարտվում են հզոր ժառանգի ծնունդով, իսկ չորրորդ ճյուղն այս իմաստով ավելի է տարբերվում նախորդներից. այստեղ հավերժության ձգտումը առասպելականացված բառացի դրսևորում է ստանում՝ անմահ Փոքր Սիերը փակվում է Ազնավաքարում:

Մենք-ի և Օտարի հակադրությունը՝ **Թշնամու դեմ պայքար-կռիվը**, իր իմաստային հագեցվածությամբ և ընդհանրացվածության մակարդակով բնորոշ է երրորդ՝ ամենահերոսական

ճյուղին, որի լուծումն էլ հերոսավեպի կառուցվածքային և գաղափարական առանցքն է, որով Դավթի ճյուղը դառնում է կենտրոնական: Առհասարակ թշնամու դեմ կռիվը տարածված թեմա է: Սակայն այն ավանդական է նաև հայ առասպելամտածողության համար, որտեղ առանձնացնում է իր բնույթով՝ կապված պատմական կենսափորձի առանձնահատկությունների հետ:

Այս ճյուղում թշնամու դեմ պայքար-կռիվ իրավիճակների հիմնական նկարագրության մեջ բացահայտվում է նաև *ընդհանրացված հերոսի կողմից լիարժեք հաղթանակին հասնելու բանաձևը*: Հերոսը որքան էլ զորեղ է, ինքնուրույն չի կարող հաղթել թշնամուն: Նրան գրեթե միշտ, բոլոր պայքար-կռիվ իրավիճակներում, տրվում են խրատներ, հուշումներ իր իսկ զորությունների մասին, ինչպես նաև օգնության հասնում թշնամու կողմից ծուղակն ընկած ժամանակ: Ընտանիքի և համայնքի ընդհանրացված կերպարների կարևորությունը, ֆունկցիոնալությունը այս իրավիճակներում, խոսում է այն մասին, որ վերջնական «*լիարժեք հաղթանակի*» հերոսը կարող է հասնել միայն, երբ կան հետևյալ բոլոր տարրերը՝ *իր ներքին հզորությունը* (հերոսը ծնվում է ուժեղ և դյուցազնական)+ *հայրերից ժառանգված ուժն ու զորությունները* (նա ժառանգն է իր հերոսական հոր, նաև հզորացման գաղտնիքների՝ «*Քուռկիկ Ջալալի, Թուր Կեծակին, Խաչ Պատերազմին*» զորությունների կրողը)+ *համայնքային փորձը և աջակցությունը* (Պառավը, կամ որևէ այլ կերպար հուշում է հերոսին իր հոր ունեցած զենքերի և զորությունների մասին, Ջենով Յովանի կանչը օգնում է հերոսին դուրս գալ ծուղակից)+ *սեփական փորձը* (հերոսը զինվելուց և հզորանալուց հետո փորձություն է անցնում, կտրում է Փորձաքարը)+ *հաստատականությունն ու հավատքը սեփական ուժերին և գործի կարևորությանը* (Ձին խաթարում է հերոսի երկմտանքը, հերոսը հիշատակում է աստվածային սիմվոլները զարկից առաջ): Այսինքն, երբ հերոսի ընտանեկան Մենք-ի ուժերին գումարվում է նաև համայնքայինը, այն ժամանակ միայն՝ այսպիսի ուժերի միավորումով միայն կարելի է հասնել լիարժեք հաղթանակին: Այսպիսով, եպիկական իրականության մեջ *Մենք-ի լինել-չլինելու հարցի լուծումը հաղթականորեն տալու համար հերոսն իր մեջ ներառում է Մենք-ի բոլոր չափումների և ողջ Մենք-ի ռեսուրսները, ուժերն ու զորությունները*:

Փոքր Միերի ճյուղում շարունակվում են կռիվ-պայքարի իրավիճակները, սակայն իմաստավորումը խստիվ տարբերվում է նախորդից: Դրանցից ամենաեականը հոր վրեժի լուծումն է, որպես ժառանգ՝ *հոր ուխտի ի կատար ածումը*. «*Քո հոր վրեժ մնացե գետին. հիմի դու չե՞ս գա էնոր վրեժ առնենք*»: Միերի հետագա թափառումներում ու այդ ճանապարհին զանազան թշնամիների հետ կռիվներում, հանուն ինչ-որ երկրների բարօրության շինարարական գործողություններում դրսևորվում են միայն ժառանգին հատուկ կարևոր ատրիբուտները. ժառանգը կենսագործում է հորից ավանդված կանոնները:

Վերջաբան

Այսպիսով, եպոսի յուրաքանչյուր ճյուղում տեղի է ունենում մի առանցքային և հիմնական իմաստակիր գործողություն, որը արտահայտում է Մենք-ինքնության կողմերից մեկը: Հերոսները Մենք-ինքնության կրողն ու արարողն են իրենց իդեալական դերակատարման մեջ: Հետևաբար, միավորելով Հերոսի՝ որպես ամբողջական Մենք-կերպարի հիմնական իմաստային գործողությունները, կստանանք կենսաշխարհի առաքելությունը, որը անձի Ես-ի մակարդակում *օջախի հիմնումն է, ժառանգի ծնումը, օջախի պաշտպանությունը և հոր ուխտի կատարումն ու հավերժացումը*, իսկ ազգային Մենք-ի մակարդակում՝ *հայրենիքի հիմնում-հիմնադրումն է, արժանի ժառանգներ թողնելը, հայրենիքի պաշտպանության համար մղվող պայքարը և ավանդական օրենքներին հավերժ հավատարմությունը*: Այսպիսին է եպիկական կենսաշխարհում հայության Մենք-ինքնության համակարգի առողջ գործառնության հիմնարար սկզբունքը, որն արտահայտում է նրա էթնոպատմամշակութային հիմքերը:



Գեորգ Յակոբյան

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող, «Երիտակ»
ՀԿ անդամ:

Մաքուր հայության քննադատություն

Նախաբան

Մարդն իր «հասկացության» բացահայտումը սկսում է իր և իրեն շրջապատող աշխարհի «արժևորումից»: Եվ խոսքը մարդու՝ «որպես տրվածի» բացահայտման մասին չէ, այլ «հոգեբանական իմացաբանության»: մարդ միշտ անուն կան լինում է ինչ-որ բան: Բացահայտելով այդ հոգեբանական երևույթը՝ մարդ բացահայտում է իր «հասկացությունը»: Արժեքաբանությունը «գիտություն» է արժեքի մասին, որը ծառայում է մարդուն *իմանալ* աշխարհը իր համար: Արժևորել՝ նշանակում է օբյեկտը դիտել որպես իմաստ: Ինքնության բացահայտմամբ, բացահայտում ենք նաև որոշակի «արժեք»¹...

Ազգային ինքնության մասին տեսությունները բազմազան են: Դրանք այս կամ այն կերպ սույն երևույթը ներառում են իր ուսումնասիրման առարկայում և փորձում են տալ պատասխաններ: Ինչևիցե, առերևույթ, հասարակությունը չի կարող գոյատևել առանց վերջինիս, առանց «ես»-ի, «նա»-ի և դրանց միջև հավերժ նմանություններ և տարբերություններ փնտրելու, առանց դիֆերենցիացիայի և ասսիմիլացիայի, առանց միասնության և հակադրության... Այսպես են առաջանում անհատները, խմբերը, ազգերը և այլն:

1. «Ինչու՞ է մեկը միշտ յուրահատուկ մյուսին (Արիստոտել, «Մետաֆիզիկա»)». այս հարցը սույն մտորման իմաստն է (Wikipedia): Սակայն այդ իմաստը պարունակում է հենց ինքնությունը որպես ինքնություն (AA)²: «ես՝ ես են»:

Ազգային ինքնությունների համատեքստում, որպես արժեքային համակարգերի բաղկացուցիչ մաս, որպես «բացարձակ արժեք», ինքնությունը որպես AA դադարում է լինել միակերպ, քանի որ անցնում է մեծ թվով սուբյեկտների արժեքային ընկալումների պրիզմայով, ինչի արդյունքում ABCD և այսպես շարունակ: Ինքնություն^օ, թե՞ fictio, նմանություն^օ, թե՞ տարբերություն, թե՞ դրանցից ոչ մեկը... Կատարելով նման վերլուծություն և քննադատելով ինքնությունը որպես սուբյեկտիվ արժեք՝ փորձենք բացահայտել դրա բացարձակ արժեքի էությունը:

2. «Ի՞նչ է հայը». ևս մի հարց, որը նույնակերպ հարցերի հետ մեկտեղ (ի՞նչ է ռուսը, անգլիացին, վրացին, քուրդը, թուրքը և այլն) մտնում է ինքնության ակտուալ հարցերի մեջ: Իմանալով ով են՝ կիմանամ ինքս ինձ...

Ինքնություն-արժեք

«Մեր կյանքի փորձը կազմավորվում է... օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրականությամբ, որը առաջինի համար ծառայում է «չոր, անմշակ նյութ» և որտեղ իրականությունը և «արժեքը» քառսայնորեն փոխկապակցված են, և նրանց միջև չկա որևէ համակարգված փոխհարաբերություն: Մենք ընկալում (ճանաչում) ենք մարդկանց և իրերը, որոնք ունեն արժեք կամ չունեն այն: Ավելին, նույնիսկ ինքներս մեզ հաշիվ չենք տալիս, որ մենք՝ ուսումնասիրման սուբյեկտներս, արժեքային չափանիշների աղբյուր ենք, և ոչ թե մարդիկ և առարկաներ՝ որպես այդ ուսումնասիրման օբյեկտներ: Մարդու դեմքը, լուսապսակի պես, ճառագում է վեհանձնությամբ: Հին կաղնու ճյուղերին նայելիս՝ զգում ենք ինչ-որ սուրբ թրթիռ: Մենք համոզված ենք, որ այն բույսը թունավոր է և նրանում տեսնում ենք բարոյական չարիք» (Spranger,

1925): Ասում ենք հայրենակից և զգում բարեկամության մի անծայրածիրություն: *Օտարը միշտ խորթ է, հեռու և անընկալելի*: «Չի հասկանա ձեր հոգին և խորթ, և օտար...» (Վահան Տերյան):

Բանականության առաջնային խնդիրը «ես»-ի առանձնացման անհրաժեշտությունն է իրականությունից, «ես»-ը հակադրել դրան և դրանով իսկ «արժեքը» անջատել իրականությունից (ՀՈՊՈՐԳԼ, 2004): Իրականում, սակայն, չկա նույնիսկ ոչ «ծախ» և ոչ էլ «աջ», այլ դրանք կազմում են «ես»-ի ընկալման տարբեր կողմերը: «*Ես*»-ը *չի անջատվում իրականությունից, այլ վերջինիս «անջատում, հեռացնում» է իրենից կամ դարձնում իր մասը՝ որպես արժեք, որպես լավ կամ վատ, որպես չար կամ բարի, որպես բարեկամ կամ թշնամի*»:

Արժեքը այնքանով է արժեք, որքանով ծառայում է մարդուն: Այսինքն, այն ունի *թելեոլոգիական* բնույթ: Ինչ նպատակ դրվում է օբյեկտի մեջ, դրան հարիր արժեք էլ այն ձեռք է բերում, վերածվում այդ արժեքի: Ինքնության նպատակը «ես»-ի գնահատումն է, ինքնության բացարձակ արժեքը՝ «ես»-ը և դրա դրսևորումները: Գոյությունը ոչինչ է՝ անհոտ, անհամ, անգույն, անկերպ ոչինչ, առանց արժեքի: Բացարձակ արժեք է ABCD, ի դեմս հավատքի և ասոցիացման, որ դա հենց այդպես է, քանի որ «ես»-ի համար դա իմպերատիվ է: Այստեղ է, որ «ես»-ը առանձնացնում է արժեքը իրականությունից, AA վերածում ABCD... ABCD բացարձակ ճշմարտություն է, քանի որ արժեք է սուբյեկտի համար³:

Ազգային ինքնություն

Նախապես մարդը համարում էր,
որ միայն իր ազգակիցներն
են մարդ, իսկ մյուսները՝ ոչ...⁴

Ինքնությունը մի երևույթ է, երբ անձն ինքն իրեն համարում է ինչ-որ արժեքի մաս, կողմնակից: Ազգային ինքնության պարագայում այդպիսի արժեքը հենց ազգն է: Սա ինքնեցման առանձնահատկություններից է: *Ինքնությունը նախատեսում է «մերոնց» և «նրանց» տարբերակում*, որտեղ պարզ պատկերացմամբ «մերոնք» բարեկամներ են, իսկ «նրանք»՝ ազգային ինքնության մակարդակում՝ «թշնամիներ և հակառակորդներ»⁵: Դա ունի խոր արմատներ: Այսպես, անձի համար փոքր հասակում գոյություն ունի էմոցիոնալ կապ իր ծնողների հետ, որտեղ վերջիններս ընկալվում են նրա կողմից որպես իր մասը. *the breast is part of me, I am the breast* (Laplanche, Pontalis, 1973): Եթե մանկության ընթացքում մարդկանց «մասն» են կազմում ծնողները, ապա հետագայում՝ «մերոնք»: Ինչ վերաբերում է «նրանց», ապա տրամաբանությունը այստեղ ավելի պարզ է. այն ինչ չի մտնում «մերոնց» մեջ, ուրեմն պատկանում է «նրանց»: «Մերոնք» և «նրանք» սուբյեկտիվ արժեքներ են: *Սրանք կարծրատիպերի հիմքերն են*: Վերջիններիս հիմնավորումը և «արդարացումը» սեփական «ես»-ի համար կատարվում է արտաքին աշխարհի երևույթների, առարկաների միջոցով: Ինչևիցե, բոլոր արժեքները միասին ստեղծում են այն պատկերը, որին անձը դասում է իր ինքնությունը: Ինչու... «Մենք»-ը դա «զեր-ես» է՝ ի գործություն ասոցիացման: Դրան, *in totale*, ընդունված է անվանել ազգ: *Ազգը այս պարագայում հենց նույն ինքնությունն է, այսինքն՝ «ես»-ի «բացարձակ արժեքը», «գոյության իմաստը*»: «Բոլոր գոյերը ոչինչ են: Չեն ասում, թե դրանք փոքրարժեք են, կամ ինչ-որ բան են նշանակում: Դրանք բացարձակ ոչինչ են: Գոյությունը ոչինչ է: Ոչ մի էակ չունի սեփական գոյություն, քանզի դրանց գոյությունը կախված է Աստծու գոյությունից» (Eckhart, Predigten) ... «Ամենօրյա կենսափորձը կոհերենտ չէ առանց կարևորության որևէ կենտրոնի, և այն տառապում է բնության և արժեքի միջև կոնտրաստից» (Hffding, 1922): Ստացվում է կա «մենք», այսինքն՝ այն գոյություն է ձեռք բերել որպես օբյեկտիվ երևույթ: Ուրեմն պետք է նաև, որ այն ունենա որոշակի հատկանիշներ և առանձնահատկություններ:

Ազգը թերևս մի այնպիսի երևույթ է և այնքան ասպեկտներ ունի, որ դրան միասնական մոտեցում ցուցաբերել անկարող են անգամ գիտնականները:

Ֆրիդրիխ Մայնեքեն առաջարկում է նույնի երկու տարատեսակ՝ *Kulturnation* և *Staatsnation*: Իմաստը կայանում է նրանում, որ տարբերակում է դրվում ազգային ինքնության՝ որպես պետական ինքնության և էթնիկ, մշակութային ինքնության միջև: Այսպիսի բաժանումը, սակայն, որպես սուբյեկտի «մենք»-ը բնորոշող դասակարգում՝ «սուտ է»։ պատճառներին դեռ կանդրա-

դառնանք: Այստեղ նախ վեր հանենք ինքնուրույն ման դասակարգման մի քանի առանձնահատկություններ...

Սմիթը առանձնացնելով պետաազգային ինքնությանը բնորոշ որոշակի ատրիբուտներ, այդպիսի ինքնությունն անվանում է ինքնության արևմտյան մոդել (Smith, 1991): Դրանք են՝ պատմական տարածք, իրավա-քաղաքական համայնք, անդամների իրավաքաղաքական հավասարություն, ընդհանուր քաղաքացիական մշակույթ և գաղափարախոսություն: Այնուհետև վերոթվարկյալին՝ որպես միասնականության գործոն, նա ավելացնում է նաև տնտեսությունը: Նույն այդ Սմիթը տալիս է նաև էթնիկ ինքնության հատկանիշները. կոլեկտիվ անվանում, ծագումնաբանական առասպել, պատմական հիշողություն, մշակույթ, յուրահատուկ «հայրենիքի» հետ ասոցիացիա, անդամների միջև համերաշխություն⁶: Ինչպես տեսնում ենք, նշված հատկանիշները համընկնում են մարդկանց պատկերացումների հետ՝ իրենց իսկ ինքնության մասին: Այժմ մեր խնդիրն է բացահայտել դրանց «թելեղոգիական արժեքը»:

Ինքնություն ad abstractio

Տարածք: Հաճախ մեր ինքնությունը կապում ենք մի կտոր հողի հետ, որ շատ փոքր է, նույնիսկ «երբեմն էլ» այնքան փոքր, որ շատերս ապրում ենք այդ հողից դուրս⁷: Կամ էլ մի պատմական տարածք ենք վկայակոչում՝ սարեր, գետեր, դաշտեր, որոնց փաստորեն չենք տիրում և հազիվ էլ երբևիցե նորից տիրենք... և ինչպե՞ս կարող է արտասահմանում բնակվող և իրեն օտարերկրյա քաղաքացի համարող հայը իրեն կապել մի «մեծ պատմական» կամ մի «ճստիկ ներկա» պետության հետ, որի քաղաքացին չի, որի լեզվին հազիվ թե տիրապետում է և *որի ներկան իրեն խորթ է քվում*: Դեռ վերջերս էր. Միացյալ Նահանգների բնակիչ (կամ ավելի ճիշտ՝ ժամանակին Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայելուց խուսափած, փաստաթղթեր կեղծած, ԱՄՆ հեռացած ու այնտեղ բնակություն հաստատած և մի թերթ հիմնած) Ա. Բ.-ն իր թերթը Հայաստանում տպելու համար, երբ յոթ-ութ տարի հետո վերադարձավ, նրան դատապարտեցին ազատագրված բնակից խուսափելու և փաստաթղթեր կեղծելու համար: Այդ ժամանակ Գլենդելյան «խիստ միասնական» հայկական համայնքի (կամ, որ ավելի ճիշտ է՝ Ամերիկայի քաղաքացի հայերի) հայկական ջիղը արթնացավ և նրանք ճիգ գործադրեցին ՀՀ իշխանություններին «հանոգելու», որ թեև վերջինս ՀՀ քաղաքացի է, բայց Գլենդելի ամերիկահայ համայնքի «պատվավոր» անդամ է⁸: Ճիգն ապարդյուն եղավ, ինչու՞... Որովհետև մի պետության քաղաքացիները գործ չունեն այլ պետության քաղաքացու գործով այդ պետության սուվերենության գործերին միջամտելու... որքան էլ որ հայ լինեն... Նույն կերպ էլ Հայաստանի Հանրապետությունն է անզոր այլ պետության քաղաքացիների հարցում... որքան էլ որ հայ լինեն...

Շատ հայեր (փաստ է) քաղաքացիությամբ հայ չեն...

Միասնական իրավա-քաղաքական համայնք ...

Մշակույթ: ՀՀ տարածքից դուրս ապրում են մոտ եռակի⁹ անգամ շատ «հայեր», ովքեր ծնված, մեծացած և (ինչը բնական է) սոցիալիզացված լինելով տարբեր հասարակություններում՝ կրում են տարբեր «մշակույթների» կնիքը, ինչպես աշխարհայացքի, վարքագծի, մտածելակերպի, այնպես էլ՝ լեզվի, մաշկի գույնի, մարդաբանական առանձնահատկությունների, կրոնի և անգամ շահերի տեսանկյունից: Հաճախ էլ, կոչվելով ամերիկահայ, ռուսահայ, ադրբեջանահայ, ֆրանսահայ, թուրքահայ, պարսկահայ և այլն, ասոցիացնում են ոչ թե վերջի «հայ»-ի, այլ սկզբի «ամերիկա-», «ռուսա-», «ադրբեջանա-», «ֆրանսա-», «թուրքա-» և այլնի հետ: Այլ կերպ՝ սա մի «սիմվոլիկ էթնոս» է (Gans 1979): «Նրանք կարող են ընտրել՝ լինել հայ, հայ-ամերիկացի, ամերիկահայ, ամերիկացի, կամ ինչ որ այլ բան... (Bakalian, 1993): Այդքանը բավարար չի, և այդ նույն սփյուռքը բաժանում ենք «հնի» և «նորի», ինչը ավելի «խայտաբղետ» է դարձնում պատկերը: Հարկ է նկատել, որ *հայերը չեն համապատասխանում Kulturnation և Staatsnation կասեգորիաներից և ոչ մեկին*: Այսինքն, դրանք կիրառելի չեն մեզ համար: Ու անգամ այդ նույն Staatsnation-ի պարագայում «մենք» և «նրանք» են առանձնացվում՝ «երևանցի», «աբարանցի»¹⁰, «ղարաբաղցի», «լեննականցի» և այլն: Ինքնությունը ձեռք է բերում «աբսուրդի» հատկանիշներ:

Անդամների միջև համերաշխություն...

Արժեքներ: Սմիթը սրանց անվանում է ծագումնաբանական առասպել, պատմական հիշողություն, յուրահատուկ «հայրենիքի» հետ ասոցիացիա. նման տեսանկյան հետ կարելի է չհամաձայնվել: Բանն այն է, որ դրանք, թեև սուբյեկտիվ արժեքներ, սոցիալիզացման արդյունք-

ներ են, ինտերնալիզացված են որպես հենց *ինչ-որ առասպել, ասոցիացիա ինչ-որ արստրալկտ հայրենիքի հետ*, «գաղափարայնացված» պատմություն և այլն... այն դեպքում, որ թելե-ոլոգիական տեսանկյունից, այդ արժեքներն արդեն «այն արժեքները չեն»:

Մյուս կողմից որպես ինքնության բնագիծ վկայակոչում ենք այնպիսի արժեքներ, որոնք արդեն փոփոխվել են, այլ երևույթ են, բայց ընդունվում են հնի «կերպարի» ներքո: Օրինակ՝ ասում ենք, թե ընտանիքը մեզ համար գերարժեք է... Քսանմեկերորդ դարում սոցիալական խնդիրները բազմապատիկ շատ են, հայ հասարակությունում՝ դրանից էլ շատ: Սոցիալական խնդիրների բեռնի ներքո կքած ընտանիքը որպես արժեք «դեֆորմացվում» է, փոփոխվում՝ հարմարվելով գոյության պայմաններին՝ վերածվում որակապես այլ երևույթի, ինչը, եթե վերաարժևորենք կան վերածակերպենք...¹¹

Ինքնություն ad absurdum

Ամեն ինչ ունի իր հակադրությունը,
բացի Աստծուց...
(պարսիկ մտածող)

Ինչպես արդեն նշվել է, ինքնությունն է պայմանավորում «մենք» և «նրանք»: «Մենք»-ը ինքնությունն է, իսկ «նրանք»-ը, ըստ երևույթին, այդ ինքնության հակառակորդը: Այսպիսով, հայ ինքնության հակառակորդը մինչ օրս շարունակում է մնալ (օրինակ) «թուրքը»: Եթե համարձակվենք ասել, որ *թուրքը հայ ինքնության մաս է կազմում*, ապա անմիջապես կմեղադրվենք արստրոլի (ինչը բնական է), խեղաթյուրման, անմտության, եթե ոչ՝ տհասության մեջ, կքննադատվենք այնպիսի հզոր փաստերի միջոցով, ինչպիսիք են հայոց ցեղասպանությունը, «արնոտ յաթաղանով թշնամին, արնախում մարդակերը և հղի կնոջը դաժանորեն սրախողխող անող գազանը» և, ինչն ամենևին էլ չի բացառվում՝ կհալածվենք նման «պիղծ մտքեր» արտահայտելու համար...

Բերենք մի պարզ և տրամաբանական վերլուծություն: «Հայ» ասածը, դա «մենք»-ն է, ուրեմն պետք է որ ամերիկահայն էլ լինի հայ, ռուսահայն էլ, թուրքահայն էլ: Մյուս կողմից, այդ «թուրքահայի» մեջ կան այն «պիղծն ու զգվելին», որին այդպիսի մեծ ջանքով հակադրում ենք մեզ¹²: Ուրեմն, ինչպե՞ս կարող են գոյատևել երկու, թշնամիներ մի հասկացությունում»: Ահա մի պարադոքս: Մի՞թե մի արստրոլ էլ սա չի: Կամ մի՞թե մեր ինքնությունը բնութագրող հասկացությունները զուրկ են իմաստից և արժեքից: Իսկ եթե ընդունենք, որ թուրքահայը, ոչ այլ ինչ է քան թուրք, ապա նույնն է ինչ ցեղասպանություն անել, նույնն է, ինչ ջնջել և վերացնել նույնպիսի մի հայի զավակների, ինչպիսին որ մյուս՝ իրենց հայ համարողներն են: Ցեղասպանությունը սպանո՞չ է զուտ, այլ ինքնության սպանություն...

Ուրեմն, ի՞նչ է հայը...

Վերաարժեքավորում

Արժեքի իմաստը նրա գործառույթն է, նորից որպես թելեոլոգիական երևույթ: Այսինքն, հայ ինքնության բնորոշումը պետք է բխի նրանից, թե ինչ գործառույթներ է այն կատարում: Ինքնության գլխավոր ֆունկցիան «մերոնց» և «նրանց» տարբերակումն է¹³: Այսինքն, «ես»-ի ինքնորոշումը: Ասել է, թե դրանք իրարից տարբերվում են վարքով (Penner)¹⁴: Մարդ ճանաչողությունը հիմնվում է վարքի վրա. թե ինչպես է վարվում ինքը և ինչպես՝ մյուսները: Ցանկացած ճանաչողություն, ինքնաճանաչում, այսինքն՝ ինքնեցում, հիմնված է ներքին սովորույթի վրա՝ պայմանավորված և ներքին, և արտաքին պատճառներով (զգացմունքներ և սոցիալիզացիա), հիմնված այնպիսի չափանիշների վրա, համաձայն որոնց՝ մեկը վարվում է հենց այս կերպ, այլ ոչ այլ կերպ: Կռահենք, որ հայն էլ պետք է որ վարվի հայավարի: Այսինքն, AA: Պատասխանելով այս հարցին՝ կհիմնավորենք մեր ինքնությունը: Վարքագիծը, սակայն, մարմնաշարժում չէ, այլ սոցիալական դրսևորում:

Ուրեմն, հայի վարքագիծը հենց հայ ճանաչվելն է: Հայ է նա, ով համարում է իրեն հայ, բարձրաձայն և հրապարակավ արտահայտվում է իր հայ լինելու մասին և դրանով իսկ թույլ է տալիս ուրիշներին իրեն հայ համարել (Հրանտ Դիմք):

Ահա և այն, ինչ անվանում են pure Armenian identity (*մաքուր* հայություն): Սա է AA-ի էությունը, և AA միայն նման շրջանակներում: Այս պարագայում, ինչքան էլ A-ն, B-ն, C-ն և D-ն լի-



Զինահիդա Սալիբեկյան

Երևանի Պետական Համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողուհի

Երիտասարդական քաղաքականության դերը Հայաստանի և Եվրամիության միջև՝ միջնաշակույթային հաղորդակցության գործընթացում

Միջնաշակույթային ուսուցմանն առնչվող բոլոր գաղափարներն այս կամ այն չափով խարսխվում են մշակույթի մասին թեպետ թաքնված, սակայն որոշակի պատկերացումների վրա: Մշակույթը մեզ ներկայանում է որպես՝

«ժրագրային փաթեթ,որ մարդիկ օգտագործում են իրենց առօրյա կյանքում. դա ընդհանուր գծերով բնութագրվում է՝ որպես մարդկանց կողմից որոշակի հիմնական պատասխանատվությունների, արժեքների և նորմերի ընդհանուր փաթեթի ստանձնում» [1 էջ 4]:

Հատկապես վերջին շրջանում, երիտասարդների կյանքի ոճի և մշակույթի փոփոխման միտում է նկատվում: Երիտասարդները փորձում են զարգացնել իրենց ինքնությունն ու հնարավորությունները: Աշխարհում ստեղծված նոր իրավիճակում, երբ տարբերակում է դրվում սեփական և օտար քաղաքակրթությունների միջև, աստիճանաբար խարսխվում են ինչպես ազգերի միջև խաղաղության, այնպես էլ՝ պետական տնտեսության կառուցման վերաբերյալ ունեցած պատկերացումների հիմքերը: «Սրան մեծապես նպաստել է Սառը Պատերազմը, որն օգնել է տարբերակել մեզ ամբողջությամբ և մեր թշնամուն» [6 p.37]: Ցանկացած հասարակարգում հենց երիտասարդներն են ներկայացնում ապագա հասարակության իդեալական պատկերը: Այսօրվա դրությամբ, սակայն, նրանք ներկայացնում են չինտեգրված զանգվածի պոտենցիալ «դիմա-նկարը»: Իսկ հանրահայտ ճշմարտությունը ծայրում է,որ երբ կորսվում է հավատը երիտասարդության նկատմամբ, այդ ժամանակ հասարակությունը սկսում է ինքն իրեն ատել:

Աշխարհում ստեղծված նոր իրավիճակում երիտասարդությանը հարկ է դիտարկել տեղեկատվական հասարակության զարգացման հոլովություն, որտեղ նրանք ընդունում կամ մերժում են այս կամ այն տարրը: Երիտասարդական քաղաքականությունը կյանքի երաշխիքն է, ու այն բանի վկայությունը, որ ներկա հասարակության արժեքներն անպայմանորեն փոխանցվելու ու ապրելու են նաև հաջորդ սերունդների կյանքում: Երիտասարդական քաղաքականությունը (կոմունիստական, ֆաշիստական, թե դեմոկրատական հասարակությունը ներկայացնող) հենվել է(ու շարունակում է հենվել) հենց այս մոտեցման վրա: Այստեղ հանգում ենք պարադոքսի. երիտասարդական քաղաքականությունն, ըստ էության, կառուցվում է համապատասխան տիպի արժեքները մաքսիմալ աստիճանի հասցնելու ուղղությամբ, երիտասարդներն էլ իրենց հերթին են դառնում հասարակության սոցիալական փոփոխությունների ունակ ներուժը: Այստեղ երկիմաստ իրավիճակ է ստեղծվում, թե երիտասարդական քաղաքականությունն մշակողների, թե այն իրականացնողների համար, քանի որ մինչ նրանք աշխատում են կոմսերվատիվ քաղաքականության մշակման ուղղությամբ, նույն այդ ժամանակամիջոցին նրանք աշխատում են երիտասարդների հետ, հենց որոնք էլ իրականացնելու են հիշատակված սոցիալական փոփոխությունները: Այսօրվա հեռուստաժրագրերը, հիթ շքերթներն ու սիրային արկածներով առլեցուն հեռուստասերիալները,կամ ասենք՝ ֆուտբոլի նկատմամբ մեծ հետաքրքրությունն այն բանի վկայությունն են,որ երիտասարդությունն արմատապես փոխվել է:

Եվրոպայի և Հայաստանի պետական երիտասարդական քաղաքականությունների համեմատական վերլուծություն

Եվրոպայի երիտասարդական խորհուրդը երիտասարդական հարցերի վրա ուշադրություն է սկսել սկսել 1960թթ.-ից, որն իր մեջ ներքին՝ հատուկ իմաստ է պարունակել: Երիտասարդության և սպորտի հարցերով Տնօրինությունը՝ երիտասարդական ոլորտի քաղաքականության և գործնական աշխատանքի խթանման նպատակով՝ պարբերական խորհրդատվությունների շրջանակներում միավորում է երիտասարդ մարդկանց, երիտասարդական կազմակերպությունների և ցանցերի, պետական հաստատությունների և փորձագետների:

Երիտասարդական սեկտորի աշխատանքն ունի իր յուրահատկությունները. մասնավորապես՝ այն ներառում է միջմշակութային ուսուցում, մասնակցության խրախուսման մեթոդներ, ոչ ֆորմալ ուսուցման ենթատեքստում կիրառվող ինտերակտիվ մեթոդաբանություն և քաղաքական խնդիրների քննարկման նպատակով՝ բաց համաժողովի ներկայացում: Բոլոր այս միջոցառումները նախապատրաստվում, իրականացվում և գնահատվում են միջազգային խմբերի կողմից, որոնց մեջ մտնում են երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, Եվրոպայի խորհրդի աշխատակիցներ, որոշ դեպքերում նաև՝ կառավարությունների ներկայացուցիչներ: Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի գործերով Տնօրինությունը համագործակցության ծրագրերի շրջանակներում կազմակերպում է նախապատրաստական դասընթացներ և սեմինարներ: Դրանից զատ՝ քաղաքականության և օրենսդրության ոլորտում խորհրդատվություններ է ներկայացնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին: Երիտասարդության և սպորտի Տնօրինությունը Եվրոպայի խորհրդի Կրթության, Մշակույթի և Ժառանգության, Երիտասարդության և Սպորտի Գլխավոր Տնօրինության մաս է հանդիսանում: Տնօրինությունը մշակում է տեղական, ազգային և եվրոպական մակարդակների վրա հիմնված հստակ և արդյունավետ երիտասարդական քաղաքականություն, դրա զարգացմանը միտված ծրագրեր և ձեռնարկներ: Այն կրթական աջակցություն և ֆինանսավորում է տրամադրում միջազգային երիտասարդական այնպիսի միջոցառումների իրականացման համար, որոնք խթանում են երիտասարդական քաղաքացիությունը, երիտասարդության շարժունությունը, մշակութային բազմակարծության զարգացումը:

«Պետական երիտասարդական քաղաքականությունը համապատասխան նորմերի համակարգ ապահովող գործընթաց է, որը նախատեսում է ինչպես երիտասարդական հարցերի բնագավառում պետության մասնակցություն, այնպես էլ՝ սոցիալ-տնտեսական, քաղաքաիրավական, կազմակերպչական պայմաններ ու երաշխիքներ, որոնք անհրաժեշտ են բազմակողմանի զարգացած անձի սոցիալական կայացման համար» [2]: Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունն է: Ի դեպ, շատ կարևոր է նշել, որ Եվրախորհրդի երիտասարդության հարցերի տնօրինության խորհրդում ընդգրկվել է նաև ՀՀ ներկայացուցիչը: Այս առումով 2004 թվականի կարևոր ձեռքբերումներից էր Եվրախորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի բյուրոյի կազմում ՀՀ ներկայացուցչի ընդգրկումը: Երիտասարդությունը պետք է լիարժեք տեղյակ լինի իր՝ հասարակության լիիրավ անդամի իրավունքների ու պարտականությունների մասին: Իրենց միասնական համայնքի անդամ զգալով երիտասարդները կարող են ինքնաիրացման ավելի մեծ հնարավորություն ունենալ: Որպես ասվածի հավաստում կարելի է բերել ուսանողական աշխատանքային ջոկատների (այսուհետ՝ ՈՒԱՋ) գործունեության օրինակը : Հայաստանում առաջին թրեյներների խումբը ստեղծվել է Հայկական երիտասարդական կազմակերպությունների ցանցի կողմից: Երիտասարդական քաղաքականության զարգացման և գնահատման համար մշակվել են տարբեր ինդիկատորներ: Ի թիվս դրանց՝ նշվում է նաև ոչ ֆորմալ կրթությունը: «Ոչ ֆորմալ կրթությունը, դա՛ չֆորմալիզացված և ֆորմալ կրթությունների միջև ընկած կրթական գործընթաց է » [3 էջ 4]: Ոչ ֆորմալ կրթության զարգացման գործում մեծ դեր ունի Եվրոպայի խորհրդի երիտասարդական Տնօրինությունը, շնորհիվ որի են գործում Ստրասբուրգի և Բուդապեշտի Եվրոպական երիտասարդական կենտրոնները: Եվրոպական երիտասարդական կառույցների կողմից որդեգրած չափանիշներին համահունչ առաջին երիտասարդական դասընթացը Հայաստանում կազմակերպվել է 2002թ-ին և կրել՝ «Երիտասարդական քաղաքականություն, միջազգային համագործակցություն և

հակամարտությունների ձևավորում» խորագիրը: Եթե երիտասարդական քաղաքականության ձևավորումը դիտարկենք հասարակական կազմակերպությունների տեսանկյունից, ապա Հայաստանի հիմնական գործունեությունը պետք է կենտրոնացնել մասնագիտական փոխանակման միջազգային ծրագրի վրա, որը հայ երիտասարդներին հնարավորություն կընձեռի ձեռք բերել մասնագիտական միջազգային փորձ՝ կառավարման, կրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների, հասարակական զարգացման ոլորտներում: Հայ երիտասարդները 2-18 ամիսների ընթացքում ապրելով և աշխատելով արտասահմանյան 93 երկրներից մեկում, կարող են ծանոթանալ ինչպես տվյալ երկրի մշակույթին, ավանդույթներին և մարդկանց, այնպես էլ՝ կատարելագործել լեզուների իմացությունը:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետխորհրդային Հայաստանի երիտասարդական քաղաքականության՝ Եվրամիության առաջարկած չափորոշիչներին անհամապատասխանությունն է խոչընդոտում միջմշակութային հաղորդակցության լիարյուն զարգացմանը: Այս հետազոտության նպատակը՝ Հայաստանի և Եվրոպայի երիտասարդական քաղաքականությունն իրականացնող կառույցների համեմատությունը, ինչպես նաև՝ անձնային մակարդակում այդ քաղաքականության առանձնահատկությունների դրսևորման դիտարկումն է: Հետազոտության օբյեկտը՝ 2000-2006թթ. միջազգային մի շարք երիտասարդական ծրագրերի մասնակցած Եվրոպական Միության 25 անդամ պետությունների և Հայաստանի քաղաքացիներն են: Նմանատիպ հետազոտության իրականացումը՝ հիմնախնդրի վերաբերյալ բովանդակային առումով առավել հագեցած տեղեկատվության ժողովումն է: Նախատեսվում է անցկացնել փորձագիտական հարցում, որը հնարավորություն կտա բացահայտել երիտասարդական քաղաքականության կառուցվածքային առանձնահատկությունները, միջմշակութային հաղորդակցության շրջանակներում (անձնային մակարդակում) դրսևորվող փոխընկալումները: Նպատակին հասնելու համար նախատեսվում է կիրառել խորին հարցազրույցների մեթոդը:

Ընտրանք

Կիրառվել է փորձագիտական հարցում հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների ղեկավարների հետ: Որոշումների կայացման գործում փորձագետներն ընտրվել են ըստ ստատուսային մասնակցության, քանի որ կոնկրետ ներկայացուցիչներից կարելի է մեզ հուզող խնդիրների վերաբերյալ բովանդակային պատասխաններ ակնկալել: Հետազոտության ընթացքում անցկացվել է տասը փորձագիտական հարցում: Անձնային մակարդակում կիրառվել է նպատակաուղղված ընտրանք: Անցկացվել են հարցազրույցներ Հայաստանի և Եվրամիությանն անդամակցող պետությունների՝ միջազգային երիտասարդական ծրագրերի մասնակցած երիտասարդ քաղաքացիների հետ: Համեմատության նպատակով անցկացվել է երեսուն հարցազրույց, համապատասխանաբար՝ 15 հարցազրույց Հայաստանի, և 15՝ Եվրամիության պետությունների երիտասարդ քաղաքացիների հետ (ընտրության չափանիշներն են՝ սեռը (արական և իգական), և բնակության տևողությունը (6 ամսից ավել):

Հետազոտության արդյունքների վերլուծություն՝ կառուցվածքային և անձնային մակարդակում

Ելնելով վերն առանձնացրած հետազոտության նպատակներից ու խնդիրներից՝ կիրառված փորձագիտական հարցման մեթոդի օգնությամբ ստացված ինֆորմացիան՝ ներկայացվում է որոշումների կայացման գործում ըստ ստատուսային մասնակցության:

Պետական և ոչ պետական ոլորտներում գուտ միջմշակութային հաղորդակցությանն ուղղված ծրագրեր չէ, որ իրականացվել են: Բոլոր ծրագրերում, սակայն, դա եղել է որպես ածանցյալ բաղադրատարր, առանց որի միջմշակութային շփումը հնարավոր չէ: Ծրագրեր, որոնք Եվրոպական գործընկերների հետ տարբեր մակարդակներում (երիտասարդական ծրագրերում՝ երիտասարդների, վերլուծական մակարդակում՝ վերլուծաբանների միջև) շփում են ապահովել: Կան նաև շատ այլ կազմակերպություններ, որոնք թեպետ երիտասարդական կառույցներ չեն դիտարկվում, այնուամենայնիվ իրականացնում են որոշակի ծրագրեր: Վերջիններս համագործակցում են Եվրոպական գրասենյակների հետ: Տարածում գտած թյուր տեսակետ կա,

թե միայն ուսանողներն են մասնակցում երիտասարդական ծրագրերին, սակայն դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ եթե մենք այսօր ուսանողներին դիտարկում ենք որպես ակտիվ ուժ, դրա հիմնական պատճառն այն է, որ հիմնական ծրագրերն անցկացվել և անցկացվում են հենց նրանց մասնակցությամբ: Տարածված մի այլ տեսակետի համաձայն, երիտասարդական ծրագրերին մասնակցողը գերազանցապես քաղաքականացված երիտասարդությունն է: Նման թյուրըմբռնման պատճառն էլ թերևս այն է, որ լրատվամիջոցները տեղեկանում են վերջիններիս՝ բացառապես քաղաքական ծրագրերի մասին, իսկ շատ այլ ծրագրեր մնում են ստվերում: Այստեղ առկա է հետաքրքրություն շարժելու, մատուցման ձևի, ներգրավման հնարավորության և ամենակարևորը՝ չխաբելու խնդիր: Հասարակության զարգացման գործում երիտասարդությանը որոշիչ դեր է վերապահված, քանի որ հենց նրանք են անհատների հնարավորության արտացոլումը: «Արվեստը, մշակույթը, ենթամշակույթները արտացոլում են նորարարական հետազոտությունները» [7 p 35]:

Երիտասարդների կյանքի ոճի և մշակույթների փոփոխման միտումն ակնառու է: Երիտասարդները փորձում են զարգացնել իրենց ինքնությունն ու հնարավորությունները: Երիտասարդներից շատերի՝ միջազգային երիտասարդական ծրագրերին մասնակցելու ցանկությունը՝, «ինֆորմացիոն մենաշնորհի» պատճառով մնում է անիրականալի: Այսինքն՝ այդ ծրագրերի մասին տեղեկանում են փոքրաթիվ մարդիկ, ովքեր միտումնաբար ինֆորմացիա չեն տրամադրում երիտասարդական ավելի լայն խմբերին: Հենց դա է տարաբնույթ ծրագրերին միևնույն մարդկանց մասնակցության պատճառը: «Տեղեկատվական քաղցին» նպաստում է նաև քաղաքականացված երիտասարդության ներհակ՝ բացառապես մարդկանց փոքր շրջանակի կողմից իրականացվող գործունեությունը:

Երիտասարդական քաղաքականության իրականացումը լուրջ ու սթափ մոտեցում պահանջող խնդիր է, և այստեղ պրակտիկ կյանքում կիրառվելիք ինդիկատորներ և սկզբունքներ պետք է մշակվեն: Պետությունը պետք է շեշտը դնի երիտասարդական քաղաքականության վրա, քանի որ երիտասարդությունն է երկրի ապագան: Պետությունն ունի կայացման խնդիր: Եթե երիտասարդական կազմակերպությունների քանակական միջոց անցում կատարվի որակական միջի, ապա իրականում կկայանան այն լուրջ երիտասարդական կառույցները, հենց որոնք էլ կարող են դառնալ Մշակույթի մախարարությանն օժանդակող ու համալրող գործոն: Մարդիկ, որպես կանոն, պրոֆեսիոնալ մակարդակի են հասնում այս կամ այն ծրագրի իրականացման ընթացքում: Շարունակականի միտող այդ գործընթացն ի գորու է լուծել նաև հասարակության առջև ստանձնած պատասխանատվության խնդիրը:

Երիտասարդական խորհրդի գործունեությանը տեղյակ չեն շատերը: Պատճառը՝ վերջինիս կողմից իրականացվող տարաբնույթ ծրագրերին՝ լրատվամիջոցների մակերեսային, ակնարկատիպ անդրադարձն է: Իսկ հայտնի բան է, որ հպանցիկ ներկայացման դեպքում կորչում է բուն իմաստը: ՀԵԱ -ին տրվելիք գնահատականը բավարարից էլ ցածր է, թեկուզ այն պատճառով, որ անվանումը չի համապատասխանում իրականությանը: ՀԵԱ -ի ձայնը գրեթե լսելի չէ: Գոյություն ունի մարդկային ռեսուրսների (այս դեպքում՝ կազմակերպությունների) պակաս: Հասարակական կազմակերպություններն ունեն կայացման խնդիր: Հայ երիտասարդների գերակշիռ մասը եվրոպական ինստիտուտների մասին ընդհանրապես իրազեկված չէ: Այս բացը լրացնելու նպատակով երիտասարդական կառույցները պետք է գնան մարզեր, շփվեն իրենց հասակակիցների հետ, զբաղվեն իրազեկման գործով: Որակական գնահատականը խնդիր է դառնում, եթե արդյունք չկա ու ծրագրերն են քիչ: Եվրոպայի շարժիչ ուժը երիտասարդությունն է: «Եվրոպայի երիտասարդությունն է կերտել Եվրոպայի պատմությունը» [8 p.9]:

Եվրոպայի երիտասարդության հետ հայ երիտասարդների լիարյուն շփմանը մեծապես խանգարում են մտածողության մեջ առկա կարծրատիպերը, որոնց չեզոքացման ուղղությամբ որոշակի քայլերի ձեռնարկման անհրաժեշտություն է նկատվում: Ընդհանուր արժեհամակարգի շուրջ մտորումներն են թույլ տալիս խոսել ընդհանրական արտաքին քաղաքականության կամ անվտանգության հայեցակարգի մասին: Սրանք իրական արժեքներ են, որոնց պատկերացումները, սակայն, մեզ մոտ խեղաթյուրված են: Մենք եվրոպական դիրքորոշում ունենք, սակայն, չգիտես ինչու մեր կառույցների կողմից դրա վրա ուղղակի շեշտադրում չի արվում: Եվրոպական արժեհամակարգի մասին հստակ դիրքորոշում որդեգրելու փոխարեն՝ ներկայացնելով դրա խեղաթյուրված տարբերակը, հասարակության մոտ պատկերացում է ձևավորվում, թե դա է իրականը: «Ստերեոտիպը՝ դա մեր ընդհանրացրած պատկերացումներն են որոշակի խմբի մարդկանց մասին, որը պայմանավորված է անձի հոգեբանական կամ անձնական հատկանիշներով» [4p.80]. Այսինքն՝ բազիսային հիմք չունենալու պատճառն է այստեղ առկա: Շատ մեծ է կարծրատիպերի քանակը (որոնք ունեն իրենց օբյեկտիվ պատճառները),

կա որոշակի թելադրանք, մանիպուլյացիա: Կարծրատիպերից կարելի է խուսափել միայն լիարժեք տեղեկացվածության դեպքում:

Տարիներ շարունակ երիտասարդների փակ մտածելակերպին նպաստած ԽՍՀՄ ազդեցությունը երիտասարդների մտածողության վրա դեռևս ակնառու է: Մտածելակերպի սահմանափակության պատճառներից մեկն էլ կրթական մակարդակի ցածր աստիճանն է, որը հնարավորություն չի տալիս երիտասարդներին ավելի սթափ ու խորագնին հայացքով դիտարկել առկա իրականությունը: Երիտասարդական միջմշակութային հաղորդակցության գործընթացին փորձել են նպաստել միջազգային երիտասարդական ծրագրերը: Դրանց մասնակցած երիտասարդներից շատերին՝ որոշակի շփումներից հետո հաջողվել է ձերբազատվել մինչ այդ ունեցած կարծր մտեցումներից: Շնորհիվ ստեղծված իրավիճակի (ծրագրի պատասխանատուներն իրենք են որոշում, թե յուրաքանչյուր մասնակից որ երկիրն է մեկնելու) տարբեր մշակույթների ներկայացուցիչներին միջմշակութային շփումների և փորձ կուտակելու հնարավորություն է ներկայանում: Արժեհամակարգերի և վարքի մոդելների հստակ տարբերությունն անվիճարկելի փաստ է: «Արևմտյան մշակույթում երիտասարդները կարող են իրենց կարծիքն ազատ արտահայտել, իսկ մեզ մոտ դա հնարավոր չէ, քանի որ դա կապված է անհատական մշակույթի բացակայության հետ» [7 p.30]:

Անդրադառնալով անձնային մակարդակում առկա միջմշակութային շփմանը, հարկ է նկատել, որ մեր մշակույթում ինդիվիդուալիզմը չեն հարգում: Տարբերությունները այլ ձևով են ընկալվում: Ի տարբերություն Արևմտյան մշակույթի, որտեղ բարձր է երիտասարդության տեղեկացվածության մակարդակը, երիտասարդությունը Հայաստանում շատ թեմաների մասին այնքան էլ տեղեկացված չէ: Կարևորն այստեղ` բաց լինելը, բայց և միաժամանակ` սեփական արժեհամակարգի չստորադասումն է. *պետք է նորը ստանալ, բայց հինը պահպանել*: Սակայն նորն ստանալու համար` նորն ընկալելու ունակություն է պահանջվում: Եվրոպայի երիտասարդությունը, որն ունի գլոբալ մտածողություն, իր հայացքը քառակուսու աշխարհընկալումից դուրս է մղում: Դրան հակառակ, հայ երիտասարդությունը քառակուսուց այն կողմ տեսնել իսկ չի փորձում: Երբ Եվրոպայից վերադառնում են Հայաստան, տպավորություն է ստեղծվում, թե նրանք *օրից են իջնում*: Գաղափարները, որոնք առաջանում են, իրավունք ունեն իրագործվելու, բայց առանց հոգեկան կամ ֆիզիկական վնաս պատճառելու: Գաղափարները պետք է իրագործել մեծ ընդգրկում ունեցող շառավղում, այլ կերպ` զանգվածի շրջանում: Հայ երիտասարդների մոտ գերակայող այն մտայնությունն է, թե այստեղ բոլոր նպատակները փլուզվում են և չեն կարող իրագործվել, թե այստեղ ոչ մի հեռանկար չկա: Փոխհաղորդակցության լիարժեքությանը մեծապես խոչընդոտում է նաև լեզվական պատմեշը: Լեզու չիմանալը մարդկանց ստիպում է մեկուսանալ, ինչն իր հերթին նպաստում է բարոյափոխմանը: Օրինակ` անգլերենի չիմացությունը էապես խոչընդոտում է լիարժեք հաղորդակցությանը: Այնուամենայնիվ, լեզվական պատմեշն այնքան կարևոր չէ, որքան մշակութային պատմեշը: «Գոյություն ունի *Սենք-Նրանք* պատմեշ» [4ր 45], որը շատ դժվար է հաղթահարել: Լեզվական պատմեշը տեխնիկական խնդիր է, իսկ մշակութայինը առաջ է բերում գիտակցական պրոբլեմներ: Այս պատմեշներն առկա են նաև առերևույթ միատարր Եվրոպայում:

Հայ հասարակության վերաբերմունքը ոչ ստանդարտ տեսք ունեցող մարդկանց հանդեպ միանշանակ չէ: Մարդկանց արտաքին տեսքը Հայաստանում և Եվրոպայում տարբեր են: Հայ երիտասարդների գերակշիռ հատվածի մոտ բացակայում է անհատականություն ասվածը: Ի տարբերություն Եվրոպացի երիտասարդի, ով փորձում է ամեն ինչով մյուսներից տարբերվել, Հայաստանում գերակայող (իրենց իսկ` Եվրոպացիների դիտարկմամբ) բոլորին նմանվելու միտումն է:

Եվրոպական ծրագրերը` թրեյնիգների կամ այլ մեթոդների օգնությամբ, փորձում են օտար մշակույթների շփման ու ըմբռնման հնարավորություն ստեղծել, նպաստել լայնախոհությանը:

Պետական քաղաքականությունը պետք է նպաստի Եվրաինտեգրմանը` նաև երիտասարդական ծրագրերի միջոցով: Հետազոտության արդյունքների համաձայն` երիտասարդության որոշակի հատված թեպետ պատրաստ է մասնակցություն ցուցաբերել երիտասարդական ծրագրերին, սակայն նյութական խոչընդոտների պատճառով շարունակում է պասիվ դիրք գրավել: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայկական ՀԿ-ները գործում են անկազմակերպ: Հասարակական և պետական սեկտորի միջև կապը թույլ է արտահայտված, ինչի արդյունքում այդ սեկտորը գործում է տարբայնորեն, որն էլ ավելի է դժվարացնում երիտասարդական համալիր քաղաքականության մշակումը: Հարկ է նշել նաև երիտասարդության մոտ նկատվող ինֆորմացիայի պակասի մասին: Երիտասարդներից շատերը պատրաստակամ

լինելով հանդերձ՝ տեղեկացված չլինելու պատճառով չեն կարողանում մասնակցություն ցուցաբերել միջազգային երիտասարդական ծրագրերին:

Մեր պետությունը լուրջ քայլեր պետք է ձեռնարկի, որպեսզի մեր երիտասարդությունը ծանոթանա եվրոպական մշակույթին, նրա արժեքային համակարգին, լրացնի գիտելիքի պակասը: Լիարժեք գիտելիքներ ստանալով՝ իրազեկված երիտասարդը կկարողանա իր շփումն ավելի ռացիոնալ մակարդակի վրա կառուցել, որն էլ հետագայում կնպաստի լուրջ երիտասարդական քաղաքականության ձևավորմանը:

Համադրելով վերոնշյալը կարող ենք ասել, որ

ո հնֆորմացիայի պակասը կհանգեցնի նրան, որ երիտասարդական ծրագրերին չեն մասնակցի տարբեր երիտասարդական խմբերի ներկայացուցիչները,

ո Հայաստանում երիտասարդական քաղաքականության վատ ներկայացումը՝ լավ մասնագետների պակասի պատճառ կհանդիսանա,

ո երիտասարդական քաղաքականության ձևավորման համար անհրաժեշտ են բյուջետային հատկացումներ, հասարակական կազմակերպությունների թերի աշխատանքը կդժվարացնի երիտասարդության և պետության միջև կապը,

ո կարծրատիպերի առկայությունը կշարունակի խոչընդոտել միջմշակութային հաղորդակցությանը միտված հետագա ծրագրերի զարգացմանը,

ո կարծրատիպերի ջախջախումը հայ երիտասարդներին հնարավորություն կընձեռի նոր ծրագրեր իրականացնել Հայաստանում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թադևոսյան Ա., Խառատյան Ա. «Միջմշակութային ուսուցում և միջազգային երիտասարդական աշխատանք»; Երևան 2006թ.:
2. «ՀՀ օրենքը՝ «Պետական երիտասարդական քաղաքականության մասին», Երևան 2005թ; հոդված 3
3. Հովհաննիսյան Ա., Թադևոսյան Ա.- «Եվրոպական երիտասարդական քաղաքականություն, Կառույցներ և Ծրագրեր»; Երևան 2005թ.:
4. թՐԳՔԱԶՈՓՈՒ՝ Զ. թ. կՏտՍՏԶ Թ. Ժ. " ԿրվՏԶօ ՎպՁՍցսՖՑցԳԿՏն ՍՏԿԿցվՈՍՈՓՈՒ"; Ծ. 2002չ
5. ԾՈՓՓցՎՏՑՑՏ Ժ. "ԽցսՖՑցԳՈՒ Ռ տրՈւՍսՏչՈւ"; Ծ. 2001չ.
6. McCarthy S. "Youth cultures, lifestyles and citizenship" Council of Europe, 2000;
7. Robinson K. "Culture Creativity and the young: developing public policy" Council of Europe, 1999
8. Siurala . L "Can youth make a difference?" Council of Europe, 2002.



Մարիամ Մովսիսյան

Հայաստանի պետական ագրարային համալսարանի Փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի դասախոս, «ԵՐԻՏԱԿ» երիտասարդական ՀԿ հասարակական կապերի պատասխանատու:

Գլոբալացման գործընթացը և արժեքների ընդհանրացման հնարավորության խնդիրը

Մինչ արդիական դիտարկվող գլոբալացման հիմնախնդրին, նրա դրդապատճառներին ու հնարավոր հետևանքներին անդրադառնալը, նախ փորձենք պարզել, թե ինչ ենք հասկանում «գլոբալացում» հասկացության տակ: Դավիթ Հելդելի կարծիքով՝ «Գլոբալացումը սոցիալական հարաբերությունների ինտենսիվացում է, որն այնպես է իրար կապում միմյանցից հեռու վայրերը, որ տեղական իրադարձությունները պայմանավորվում են հարյուրավոր մոլորակներ հեռու կատարվող դեպքերով, և հակառակը»: Թեպետ դժվար է այս կարծիքը չընդունելը, այնուամենայնիվ հարկ է նկատել, որ գլոբալացումն ամենևին էլ նոր երևույթ չէ, այն անընդհատական գործընթաց է, որն այսօր ընդամենը իր արագացման պատճառով է ավելի ակնառու դարձել: Շատերին այն անգամ արժեքներ ոչնչացնող «հրեշի» տեսքով է ներկայանում:

Գլոբալացման արագացումն իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով. տեխնիկա, փոխադրամիջոցներ, տեղեկատվական և հաղորդակցական համընդգրկուն ցանցեր, միջազգային և մետաազգային կառույցներ ու կազմակերպություններ, միջազգային առևտուր, ընդհանուր իրավական համակարգ և այլն:

Իսկ ինչպիսի հետևանքներ են կանխատեսվում համաշխարհայնացման արդյունքում. արևմտականացում, հասարակության համասեռություն, պետության սահմանների թափանցիկություն, ազգային պետության թուլացում, քանի որ պետության ազգային տնտեսության վերահսկման կարողության կորուստը՝ բերում է նրա քաղաքական դիրքերի թուլացման, մշակույթների բազմազանության ու հիբրիդացման և այլն:

Այս ամենը գուցե գալիս է հաստատելու Դ. Քելլերի այն կարծիքը, թե՛ գլոբալիզացիան իր արդյունքներով հանդերձ՝ վերոնշյալ ամեն ինչն է: Քելլերը գլոբալացումը դիտարկում է որպես՝ զառանդ արդիականության և նոր ծնվող հետարդիականության դարաշրջանների միջև գոյող անցումային իրադրություն:

Այստեղ հարց է ծագում. իսկ արժեքների ընդհանրացում հնարավոր է, թե՞ ոչ:

Մինչ այս հարցին պատասխանելը, պետք է հասկանանք, ինչպիսի արժեքների մասին է խոսքը, քանի որ կան զուտ ազգային և համամարդկային արժեքներ:

Թեպետ այսօր շատ է խոսվում համամարդկային արժեքների մասին, սակայն դժվար է պատասխանել, թե որոնք են այդ արժեքները:

Եթե դրանք գոյություն ունեն, ապա նրանք, որքան էլ ընդհանուր լինեն, կունենան ազգային առանձնահատկություններ: Իհարկե, կարծիք կա, որ ազգային պետությունները վաղ թե ուշ դադարելու են գոյություն ունենալ, ինչը մեր կողմից չի ընդունվում: Ազգային պետությունները մեր կարծիքով կշարունակեն գոյություն ունենալ, սակայն նրանք չեն լինի այնպիսին, ինչպիսին այսօր են, այսինքն՝ ազգային պետություն հասկացությունը կվերաիմաստավորվի և կառաջանան նոր ազգային պետություններ, որոնք կունենան զրեթե նույն իրավական, քաղաքական և տնտեսական համակարգերը, սակայն, դրան զուգահեռ, կգործի ինքնության և տարբերության քաղաքականությունը, որը չնայած պետության սահմանների թափանցիկությանը, կընդգծի նրա սահմանները, դրա մասին կարող է վկայել և՛ այն, որ բոլոր պետությունների տարածքում մարդիկ խոսում են բարբառներով, չնայած նրան, որ կա մեկ պետական լեզու, և՛ աշխարհագրական դետերմինիզմի տեսությունը, և՛ այլ հանգամանքներ: Այս դեպքում էլ հարց

կառաջանա՝ արդյոք այդ ազգային պետությունը կպահպանի՞ իրենից առաջ գոյություն ունեցող պետության ազգային արժեքները: Պատասխանը միանշանակորեն կլինի «ո՛չ», քանի որ դրանք կլինեն եղած մշակույթի և այլ մշակույթների արդյունքում առաջացած հիբրիդներ:

Վերոնշյալը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր արժեքները, որոնցով ապրում է հասարակությունը, իսկ հասարակության փոփոխությունը բերում է արժեքների փոփոխության, հետևաբար այն չի կարող լինել հավերժական: Այն միշտ փոփոխության մեջ է, ինչպես աշխարհն ու մարդկությունը: Արժեքների փոփոխության հետ, սակայն, սերնդափոխությունն է գալիս հաղթահարելու այդ դժվարությունը:

Իսկ հնարավոր է արդյոք ընդհանուր արժեքներ բոլորի համար հարցի պատասխանը միանշանակ տալ չի կարելի: Օրինակ՝ միջազգային առևտուրը, սա մի երևույթ է, որը օգնում և արագացնում է գլոբալացման գործընթացը, քանի որ, եթե ինչ-որ մեկը որևէ իր ուզում է վաճառել այնպիսի պետության տարածքում, որը այդ իրը համարում է իր արժեքներին հակասող, ապա այստեղ՝ այդ վերաբերմունքը փոխելու խնդիր է առաջանում: Սակայն սկզբնական շրջանում վաճառականները այդքան ուժ և հնարավորություն չեն ունեցել ազդել ժողովուրդների գիտակցության վրա: Սակայն այսօր՝ տեխնիկան, տեղեկատվական և հաղորդակցման ցանցերը թուլացրել են վերահսկողությունը: Ավելին՝ կան հատուկ մասնագիտություններ, որոնք նպատակաուղղված ստեղծում են համապատասխան պայմաններ, որպեսզի բոլոր ազգերի համար կոնկրետ արտադրողի արտադրանքը լինի ցանկալի: Այսինքն՝ պայմանների փոփոխությանը զուգահեռ աշխարհի տարբեր հատվածներում տարբեր մարդիկ սկսեցին նախընտրել նույն սանրվածքը, զգեստը, ֆիլմը, ինտերնետային կայքը, երաժշտական ոճը, բջջային հեռախոսը և այլն: Այլ կերպ, եթե առաջ արտադրողն ու վաճառողն էին հարմարվում շուկային ու նրա պահանջներին, ապա այսօր նրանց է հաջողվում իրենց հարմարեցնել մարդկանց պահանջմունքները, որոնք էլ ձևավորում են պահանջարկը:

Այսպիսով, այսօր շատ արժեքներ պարտադրված են, ինչը մենք չենք էլ գիտակցում, սակայն մյուս կողմից էլ պարտադրվում են նաև այնպիսի արժեքներ, որոնք անհրաժեշտ են այդ մետապետության ստեղծման և կայացման համար, որոնց մենք՝ գիտակցելով հանդերձ ենթարկվում ենք, քանի որ դրանք թելադրված են պետական համակարգով:

Այս կապակցությամբ «Կոսմոպոլիտական ժողովրդավարության մոդելի» հեղինակ Յելլը գտնում է, որ հաղորդակցությունների և տեղեկատվության գլոբալացումը չի ստեղծում ընդհանուր մարդկային նպատակի զգացողություն, այլ ծառայում է ինքնության և տարբերության քաղաքականության ամրապնդմանը՝ դրանով «է՛լ ավելի խթանելով քաղաքականության «ազգայնացումը»: Արժեքները մարդկանց կյանքում կարևորագույն դեր են կատարում: Նրանք ձևավորվում են որոշակի պայմաններում և փոխվում են այդ որոշակի պայմանների փոփոխություններին զուգընթաց, ինչին, հարկավ, մարդիկ դժվար են համակերպվում»:

Ըստ նրա «Կոսմոպոլիտական ժողովրդավարության մոդելի»՝ անհրաժեշտ է «միջազգային քաղաքական նոր մշակույթ և յուրահատուկ ազգային, էթնիկ, մշակութային և սոցիալական այն ինքնությունների ուսումնասիրություն, որոնք թե սահմաններ են հաստատում, թե հնարավորություններ բացում կոսմոպոլիտական ժողովրդավարության և քաղաքացիության զարգացման համար»: Ըստ Յելլի, այդ ինքնությունների հոգնակիությունը կայուն ձևով պահպանելու համար «յուրաքանչյուր ոք պետք է ճանաչի մյուսին՝ իբրև օրինական ներկայություն, որի հետ պետք է գալ որոշակի համաձայնության: Եվ յուրաքանչյուրը պետք է հոժարակամ հրաժարվի իրավունքի, բարիքի, համընդհանուրի և տարածականի նկատմամբ դրսևորվելիք բացառիկ հավակնությունից»:

Սակայն այսօր դժվար է պատկերացնել այս տեսության իրականանալի լինելը, հետևաբար՝ արժեքների գլոբալ ընդհանրացման վտանգի սպառնալիք չկա, իսկ ինչ վերաբերվում է բուն արժեքների ձևափոխմանը և ժամանակի ոգու հետ համահունչ դառնալուն, ապա այդ գործընթացը անհնար է կանգնեցնել:

Այսպիսով, արժեքները, որոնք անընդհատ փոփոխության մեջ են, այսօր փոփոխվում են ավելի արագ: Նրանք վերջնականապես դեռ չհաստատված հասարակության մեջ՝ արդեն ենթարկվում են փոփոխությունների: Այսօր մշակութային բազմազանությունը դառնում է ավելի ակնառու, սակայն արդյունքում ձևավորվում են որոշ արժեքներ, որոնք բոլորի համար ընդհանուր են թվում, սակայն ամեն մի ժողովուրդ այն յուրովի է ներկայացնում, իրեն ավելի հոգեհարազատ ձևով, այսինքն՝ արժեքները որքան էլ ընդհանրացվեն, այդ ընդհանրության մեջ կլինի նաև յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունը:



Համլետ Մելքունյան

2003-2005թթ. աշխատել է ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի հանգիտազգագրական գիտահետազոտական արշավախմբում: 2006թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության Սփյուռքի հետ կապերի գործակալությունում: Հայաստան-Սփյուռք 3-րդ եռաժողովի աշխատանքային-կազմակերպչական խմբում: 2007թ.-ից աշխատում էՊՀ Մշակութաբանության ամբիոնում:

Արտաքին ազդեցությունները և մշակութային արդի գործընթացները ՀՀ-ում

Ի տարբերություն անկախացման առաջին տասնամյակի, վերջին տարիներին հատկապես, Հայաստանի Հանրապետությունը սկսել է ընթանալ որոշակիորեն նախանշված տնտեսամշակութային փոփոխությունների ուղով: ԽՍՀՄ կազմից դուրս գալուց հետո Հայաստանը հայտնվեց ներքաղաքական-տնտեսական ճգնաժամային իրավիճակում. արցախյան հակամարտության ծավալմանը զուգընթաց կտրուկ վատթարացավ թե արտաքին, թե ներքաղաքական դրությունը:

1991-1996թթ.-ին Հայաստանին վիճակված էր ապրել պատմամշակութային քառտիկ ժամանակաշրջանում: Այս ժամանակաշրջանը Հայաստանի համար հիմնականում բնորոշվում է՝ որպես անցումային փուլ: Անցումային շրջանն իր էությանը՝ անկման և վերելքի համակարգային կորագիծ է: Այն կարող է տևել մինչև մեկ տասնամյակ կամ լինել երկարատև (մեկ տասնամյակ և ավելի), ինչը կախված է տվյալ պետության տնտեսամշակութային ներուժի որակական պաշարից:

Հրաժարվելով խորհրդային տնտեսամշակութային, քաղաքական համակարգերից՝ ՀՀ կառավարությունն իր նոր քաղաքականությամբ ձեռնամուխ եղավ տնտեսամշակութային նորարարությունների իրականացմանը՝ չապավինելով անգամ ավանդական սոցիոմշակութային նորմերին: Տեղի ունեցավ մշակութային կտրուկ անցում, այսինքն՝ «փակ» կամ հիերարխիկ մշակութային համակարգից փորձ արվեց անցնել «բաց» կամ ազատ ստեղծագործային, ժողովրդավարական մշակութային տիպին: Այս քայլը, սակայն, խիստ ռիսկային էր մշակութային քառտիկ շրջափուլում հայտնված նորանկախ հանրապետության կառուցողական քաղաքականության համար: Այս շրջադարձի պատճառով էր նաև, որ խորհրդային մշակութային էլիտան արժեզրկվեց, իսկ որոշ դեպքերում էլ միտումնաբար մատնվեց մոռացության: Այդ շրջանում ի հայտ եկած տնտեսական ծանր պայմանները՝ հասարակական գիտակցությունն ակամա կենտրոնացրին կենսական-կենցաղային նյութական պահանջների բավարարման խնդրի վրա: Հետևանքն առաջնահերթ արտացոլվեց մշակութային հորիզոնական հարթության մակարդակում. հասարակությունը էլիտար միավորի չափանիշ ընդունեց ոչ թե բարոյամշակութային արժեքները, այլ տնտեսական բարվոք վիճակը: Այս պատճառով էր նաև, որ հասարակական նոր տնտեսամշակութային էլիտան կազմավորվեց և համալրվեց հիմնականում ունևոր անհատներով և խմբերով: Փաստ է նաև այն, որ նոր էլիտա համարվողները չփորձեցին, ավելի ստույգ՝ ի վիճակի չէղան ապահովել ազգային, պետական, մշակութային ավանդական-դասական արժեքների որակական վերարտադրությունը: Ներհասարակական կապերն աստիճանաբար ավելի թուլացան, մեծացան ներմշակութային սոցիոնորմատիվ խզումները: Սա էլ իր հերթին հանգեցրեց հասարակական նորմատիվային դիմադրողականության թուլացմանը, ինչի հետևանքով լայն թափ առավ արհեստածին, կեղծ արժեքների ծնունդը: Սրանք սկզբնական փուլում զուտ խմբային կիրառություն ունեին, բայց հետզհետե վերածվեցին հանրային «արժեքի» և դարձան զանգվածային մշակույթի մաս: ¹

Կեղծ արժեքների առաջացումն ու տարածումը վկայում է այն մասին, որ տվյալ մշակութային համակարգը գրկվել է ուղղահայաց և հորիզոնական արժեքային առանցքները համակցող-սինթետիկ, վերարտադրող մշակութային շերտից:

Սոցիալական ճգնաժամի հետևանքով առաջացած աղքատության բարձր ցուցանիշը նույնպես արգելակում է մշակութային որակական վերարտադրությունը: Սոցիալական անապահովության պատճառով գիտամշակութային ոլորտի գործիչներից շատերը դիմեցին արտագաղթի: Փաստորեն, տեղի ունեցավ սոցիոնորմատիվ մշակութային արժեքների պահպանումն ու վերարտադրությունն ապահովող և կրող հասարակական շերտի արտահոսք, որի հետևանքով կտրուկ նվազեց նոր սոցիոմշակութային երևույթների որակական արժևորումը ազգային մշակութային համակարգում: Մտավորական շերտի կայուն ներուժի պասիվ գործունեությունը խոցելի դարձրեց հասարակական լայն զանգվածների արժեքային ճանաչողությունը և մշակութային ինքնագիտակցությունը: Ջուզահեռաբար ուժեղացան արտաքին մշակութային էքսպանսիայի միջոցով հայ հասարակությանը մատուցվող նորամուծությունները, ինչն էլ ավելի սրեց ազգային ավանդույթների հանդեպ ներհասարակական մերժողական վարքագիծն ու օտարումը:²

Հայաստանը կանգնեց արևմտյան տնտեսամշակութային ինտեգրացիային միանալու խնդրի առաջ: Տնտեսական լծակների միջոցով Արևմուտքը կարողացավ հաջողության հասնել մշակութային խաղաղ ներթափանցումն իրականացնելու գործում, մշակվեցին և կառավարման մարմիններին մատուցվեցին նաև պետական-մշակութային քաղաքականության կառավարման մոդելներ:³ Մշակութային ներհոսքին լավագույնս նպաստեց էթնոհոգեբանական ճգնաժամը, երբ մշակութային տարբեր սերունդների միջև խորացավ՝ ավանդույթ-նորույթ համակարգային հակամարտությունը: Ու քանի որ սկզբնական փուլում չէր գործում սինթետիկ վերարտադրող ուղղահայաց մշակութային առանցքը, փաստորեն տեղի ունեցավ արևմտյան արժեհամակարգի մեխանիկական յուրացում և ընդօրինակում: Հորիզոնական մշակութային դաշտում առաջացան նոր արժեքային տարրեր, որոնք հեռու են ավանդական հայկական էթնոմշակութային ակունքներից և գործում են միայն մակերեսային տիրույթում:

ԽՍՀՄ փլուզումը հետխորհրդային երկրներում՝ այդ թվում և Հայաստանում, ավագ և միջին սերնդի մոտ առաջացրեց արժեքային դատարկություն: Մարդիկ հայտնվեցին նոր մշակութային հարթության մեջ, որտեղ նրանց արժեքների գործառույթային ամբողջականությունը դարձավ անկիրառելի, հանդիսանալով միայն՝ որպես պատմական հիշողություն: Պետականության ամրապնդմանը համընթաց որոշակի կանոնակարգման ենթարկվեցին սոցիոմշակութային արժեհամակարգերը, սակայն հիմնական շեշտադրումն ուղղված էր օտարամուտ նորամուծությունների վերարտադրմանը: Այսինքն՝ էթնոմշակութային առանձնահատկությունները մղվում էին հետին պլան՝ վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին ինֆորմացիոն ներխուժման համար: Սակայն, եթե ներմուծվող արժեքների յուրացման ընթացքը աստիճանական (ադապտատիվ) լիներ, ապա տեղի կունենար արժեքի մշակութայնացում:

Արդի մշակութային շրջափուլում Հայաստանում նորամուծությունները հիմնականում վերաբերում են զանգվածային մշակույթի համակարգին:

Սա արտահայտվում է թե կենսաապահովման, թե արտադրական, թե մշակութային ենթաբաժիններում: Ջանգվածային մշակույթի լայնատարած ձևավորմանը նպաստում է ապակառուցողական արժեքների բազմաքանակությունը, և դրանց կիրառումը ներկա մշակութային դաշտում: Անցումային փուլում Հայաստանին բնորոշ են նաև անկումային (դեպրեսիվ) արժեքները, որոնք խոչընդոտում են մշակութային ինքնատիպության շարժընթաց վերարտադրությունը:⁴

Վերանայելով անկախ Հայաստանի մշակութային ընդհանրականությունը՝ ակնառու է դառնում հոգևոր մշակույթի ապաիմաստավորումը. հոգևոր մշակույթը դառնում է հաճախ անհասկանալի: Տեղի է ունենում հոգևոր մշակույթի նյութականացում, շուկայնացում և մեխանիկական վերարտադրություն՝ կենսաապահովման համակարգում այն հնարավորինս կիրառելի դարձնելու նպատակով: Հակասությունն այն է, որ այս ամենը տեղի է ունենում այն դեպքում, երբ ՀՀ-ում վերջին տարիներին ինտենսիվորեն ավելանում են գիտամշակութային կենտրոնները, մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները: Բուհական շրջանավարտների թիվը տարեցտարի ավելանում է, բայց կրթության և մասնագիտական գիտելիքի

որակը դեռևս անկայուն է: Կրթության բուն էությունը որպես այդպիսին որակագրկվում է՝ դառնալով զանգվածային ինտեգրոն գործընթաց:⁵

Հայաստանում կրթական բուն պահանջարկն իրականում ներմշակութային սոցիոհոգեբանական փոխակերպման պատճառ է: Չանգվածային մշակույթն իր ընդլայնումն ապահովում է կրթության միջոցով, որը արդի հայ մշակույթում համարվում է հեղինակային, հասարակական չափանիշային սանդղակ, և ոչ ամենևին՝ մասնագիտական ունակությունները զարգացնելու և գիտելիք ձեռք բերելու միջոց:

Փաստորեն, կրթությունը ներկայիս Հայաստանում՝ զանգվածային մշակույթի պահանջարկ է և թելադրվող հետևանք:

Բացի ներքին ակնբախ մշակութային խնդիրներից, ՀՀ-ն ունի նաև արտաքին վտանգներից դիմակայելու կարիք: Ներմշակութային անկայունության պատճառներից մեկն էլ արտաքին ուժերի ակտիվ միջամտությունն է: Ինֆորմացիոն-ցանցային դարաշրջանում Արևմուտքը ձեռնամուխ է եղել տեղեկատվական «գրոհի», այդ ճանապարհով հայկական «փակ» մշակութային տիպ ներմուծելով ազատության, հավասարության գաղափարները, որոնք բնորոշ են «բաց» տնտեսամշակութային համակարգերին: Նման արժեքային ներհոսքերը հայկական մշակույթում առաջացրին շոկային իրավիճակ, որի հետևանքով խզվեցին մշակութային էթնոմիավորիչ և հաղորդակցական-համախմբողական կապերը:⁶

Տեղեկատվական մշակութային ներհոսքի մեկ այլ միջոց են զանգվածային լրատվամիջոցները, որոնք օգտագործվում են հասարակական գիտակցության հոգեբանական ապակողմնորոշման և ուղղորդման համար, և առաջնային աղբյուր են հանդիսանում զանգվածային մշակույթի տարածման գործում: Լավագույն օրինակներ են արևմտյան ծագմամբ ֆիլմերի և հեռուստասերիալների ցուցադրմանը տրամադրվող եթերաժամերի առավել մեծ չափաբաժինները: Չանգվածային լրատվամիջոցները կարողացան վերափոխել, կաղապարել հանրային գիտակցությունը:

Մարդկանց սկսեց հետաքրքրել միայն վիրտուալ-տեսողական հեռուստափրականությունը: Հայկական միջավայրում տեղեկատվական համացանցի՝ Ինտերնետի մուտքը նույնպես կատարվեց հետաքրքիր օրինաչափությամբ:

Մշակութային անպատրաստության պատճառով Ինտերնետ ցանցը սկզբնական փուլում միայն սպասարկման գործառնության դաշտում էր կիրառվում, սակայն վերջին տարիներին արդեն նկատվում է հսկայական թռիչք վերջինիս արդյունավետ մշակութային յուրացման և օգտագործման մեջ:⁷

Հայաստանում հանրային հոգեբանության և աշխարհընկալման փոխակերպման վառ օրինակ է արդի հայ ընտանիքի պատկերը: Հատկապես անկախացման վերջին տասնամյակում, հայկական ընտանիքը ենթարկվեց մշակութային լուրջ փոխակերպումների: Առավել նկատելի փոխակերպումները դրսևորվում են հատկապես Երևանում, որը առաջինն է կրում ցանկացած նորարարության ազդեցությունը:⁸ Հայկական շատ ընտանիքներ ընդօրինակում և փորձում են նմանվել ընտանիքի արևմտյան մոդելին, իսկ որպես հասարակական կայուն միավոր և հանրային վերարտադրող՝ ընտանիքի ամենաթույլ վերափոխումը անմիջապես անդրադառնում է հասարակության կառուցվածքի վրա:

Փաստորեն, Հայաստանը մշակութային ամբողջականության պահպանման և վերարտադրության ապահովման առումով լուրջ անելիքներ ունի: Ակամայից հայտնվելով մշակութային համաշխարհայնացման հոսքի մեջ, անհրաժեշտ է ոչ միայն մեխանիկական կրողի դեր ունենալ, այլև ստեղծել մասնակցային արժեքներ: Իսկ մասնակցային արժեքների ստեղծումը կարելի է ապահովել մշակութային ինքնատիպ ստեղծագործական ներուժի ուղղորդված օգտագործման դեպքում միայն:



Կարեն Բադալյան

Ավարտել է ԵՊՀ ժողովրդագրության ֆակուլտետը: Այնուհետև ուսումը շարունակել է բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի արտասահմանյան գրականության բաժնում և Վիեննայի պետական համալսարանում: Աշխատել է ԵՊՀ գերմաներեն լեզվի ամբիոնում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, ՀԱՕԿ-ում: 2005 թվականից աշխատում է <Ռուսալ Արմենալ> ՓԲԸ-ում:

Հայաստանի արժեհամակարգի փոփոխման միտումներն ու դրան նպաստող գործոնները

Հայաստանի նման աշխարհաքաղաքական դիրք ունեցող պետության համար, ահագնացող գլոբալիզացիայի պայմաններում, իհարկե, անհնար է զերծ մնալ քաղաքակրթությունների բախմամբ պայմանավորված կողմնակի ազդեցություններից, որն իր հերթին է իր հետքը թողնում (և բացասական, և դրական առումով) հայի ինքնության ու արժեհամակարգի վրա: Ընդ որում, այդ պրոցեսին տրվող գնահատականները խիստ հարաբերական են, քանի որ ժողովրդավարական հասարակության պայմաններում հնարավոր չէ միատարր կարծիք հայտնելը, առավել ևս՝ պարտադրելը:

Այն, որ Հայաստանի արժեհամակարգը մշտապես ենթարկվել, ենթարկվում և ենթարկվելու է փոփոխությունների, անժխտելի փաստ է: Ի դեպ, նման փոփոխություններ տեղի են ունենում բոլոր երկրներում: Ընդ որում, այս գործընթացը ծավալվում ու զարգանում է գլխապտույտ արագությամբ: Տարբեր են նաև նույն այդ գործընթացով պայմանավորված փոփոխությունների, դրանց դրական և բացասական ներգործության վերաբերյալ մարդկանց մոտ եղած ընկալումները: Գլոբալիզացիայի պայմաններում քաղաքներում բնակչությունն ավելի արագ տեմպերով է խառնվում, ինչն իր հերթին ենթադրում է զանազան արժեքների տեղաշարժ: Նույն ընկերություններն ու նույն մարդիկ ապրում և աշխատում են աշխարհի տարբեր անկյուններում: Շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների աշխարհը գնալով փոքրանում է, ինչն էլ իր հերթին է նպաստում արժեքների արագ տեղաշարժին: Թե ինչ փոփոխությունների է ենթարկվել աշխարհը՝ զուտ ֆիզիկական տեղաշարժի առումով, ավելի պատկերավոր կարելի է տեսնել ստորև ներկայացվող գծապատկերում: Իսկ եթե հաշվի առնենք ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը, ինտերնետի ու հեռահաղորդակցության լայն հնարավորությունները, ապա քաղաքակրթությունների միջև անմիջական շփումը դառնում է պարզագույն և անխուսափելի մի գործողություն: Եվ եթե հինգ հարյուր տարի առաջ արժեքների փոփոխության գործընթացը կարող էր տևել տասնյակ, նույնիսկ հարյուրավոր տարիներ, ապա առկա պայմաններում բավական է միայն մի քանի տարին:

Պատկեր 1. Աշխարհի „սեղմվելը“: Աղբյուրը: Berger, 1995. էջ 109. (ըստ D. Harvey)

1500-1840



Ձիակառքերի և առագաստանավերի միջին արագությունը՝ մոտ 15կմ/ժ

1850-1930



Շոգեքարշերի միջին արագությունը՝ մոտ 100 կմ/ժ, շոգենավերինը՝ մոտ 55 կմ/ժ

1950-ական թվականներ



Պտուտակավոր ինքնաթիռների միջին արագությունը՝ մոտ՝ 480-640 կմ/ժ

960-ական թվականներ



Ռեակտիվ ինքնաթիռների միջին արագությունը՝ մոտ 800-1100 կմ/ժ

Ժողովրդավարական նկրտում ունեցող երկրի ներսում տվյալ ազգին բնորոշ արժեհամակարգի փոփոխությունը՝ նման պայմաններում դառնում է անխուսափելի և բնականոն: Իհարկե, այս գործընթացում կարևոր դեր ունի նաև տվյալ պետության ռազմավարական ու քաղաքական ուղղվածությունը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, օրինակ, նախկին բալթյան հանրապետությունների վարած քաղաքականության ու ռազմավարության շնորհիվ, վերջիններս շատ կարճ ժամանակահատվածում կարողացան իրենց վրայից թոթափել խորհրդային արժեքները, և նույնիսկ հասցրին դառնալ Եվրոմիության լիիրավ անդամ: Դրանում, իհարկե, նաև մեծ դեր խաղաց այդ երկրների աշխարհագրական դիրքն ու հակամարտության թեժ գոտիների բացակայությունը, ինչը չես ասի Հայաստանի պարագայում: Ելնելով ռազմաքաղաքական իրավիճակից Հայաստանը վարում է բավականին ճկուն քաղաքականություն: Մեր երկիրը ռուսաստանամետ համարվելով հանդերձ, Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի հանդեպ մերժողական քաղաքականություն չի վարում, ինչպես օրինակ Վրաստանը՝ Ռուսաստանի հանդեպ: Հայաստանի նման փոքր պետություններին գերտերությունների կողմից հաճախ պարտադրվում են որոշակի արժեքներ, ընդ որում, հաճախ զրկելով այլընտրանքի հնարավորությունից: Նման օրինակ կարելի է դիտարկել կրթական համակարգի արմատական փոփոխությունը: Իհարկե, միանշանակ հնարավոր չէ պնդել, որ այս փոփոխությունը բացասաբար կանդրադառնա կրթության որակի վրա: Իսկ թե ինչ կշահենք մենք դրանից, միայն ժամանակը ցույց կտա:

Դարեր շարունակ մուսուլմանական ազդեցության գոտում գտնվելով, մեր արժեհամակարգում արմատակալել են իսլամական նիստուկացի որոշակի տարրեր: Դրանցից ոմանք դարձել են ազգային, ոմանք էլ աստիճանաբար դուրս են մղվում: Այնուհետև մեր երկիրը ստիպված էր ինտեգրվել խորհրդային արժեհամակարգին, ինչը նույնպես ունեցավ իր ազդեցությունը՝ մեր ազգային արժեհամակարգի ձևավորման գործում: 21-րդ դարի սկզբին Հայաստանի որդեգրած քաղաքականությունն այնպիսին է, որ թույլ է տալիս զանազան արժեքների ներթափանցումը մեր երկիր: Հայաստանը լինելով քրիստոնեական երկիր, որը առանձնահատուկ հպարտությամբ է ընդգծում այդ փաստը, իհարկե հակված է դեպի արևմտյան արժեքները, քանի որ արևմտյան քաղաքականությունը հիմնված է քրիստոնեական մարդասիրության սկզբունքների վրա: Սակայն արևմտյան արժեքները հալած յուրի տեղ ընդունելն այնքան էլ ճիշտ չէ, ուղղակի Հայաստանի համար այլ ընդունելի այլընտրանք գոյություն չունի: Եթե Հայաստանը լիներ մահմեդական պետություն, ապա պատկերը միանգամայն այլ կլիներ: Ինչպես ցույց է տալիս իրականությունը, համաշխարհային կրոններից մասնավորապես իսլամը կարող է խոչընդոտ հանդիսանալ արժեքների փոխանակման ու տեղաշարժի գործընթացում, քանի որ իսլամը մերժողական վերաբերմունք ունի այն ամենի հանդեպ, ինչն իր աշխարհընկալումից դուրս է, և իսլամի արժեքները քննարկման ենթակա չեն, դրանք պետք է ընդունվեն՝ որպես բացարձակ ճշմարտություն: Այդ պատճառով է, որ արևմտյան արժեքների ներթափանցումը իսլամական միջավայր՝ տեղի է ունենում մեծ դժվարությամբ և այդ գործընթացը բավական երկար է տևում:

Հայաստանի պարագայում, արժեհամակարգի փոփոխման գործում իր հսկայական դերն ունի նաև հայկական սփյուռքը՝ իր բազմազանությամբ ու յուրօրինակությամբ: Հատկապես Հայաստանի անկախությունից հետո անհամեմատ մեծացավ սփյուռքահայ երիտասարդության հոսքը դեպի հայրենիք: Նրանց մի մասը մշտապես հաստատվեց Հայաստանում: 10-20 տարի անց ավելի ցայտուն կերպով կընդգծվեն այն փոփոխությունները, որոնք մեր օրերում դեռևս ընթացքի մեջ են: Իհարկե, ոմանք լիովին հարմարվում են Հայաստանյան բարքերին, ոմանք էլ նոր խոսք ու ոճ են հաղորդում մեր կենսակերպին: Այս առումով մեծ դեր են խաղում նաև հասարակական միջոցառումներն ու զանգվածային լրատվամիջոցները, ինչպես նաև մեր հայրենակիցների հասարակական, մշակութային ու քաղաքական գործունեությունը:

Արժեհամակարգում ցանկացած փոփոխություն ունի իր և դրական, և բացասական կողմը: Օրինակ, մեր օրերում ավանդապաշտ ներկայացող Հայաստանում ամուսնալուծությանը վերաբերվում են սովորական, ամուսնալուծությունների թիվը աճում է: Այս երևույթը, որպես այդպիսին, իհարկե բացասական երևույթ է համարվում: Բայց մյուս կողմից էլ շահարկվում է կնոջ իրավունքների հաղթաբարտը (իհարկե, լինում են դեպքեր, երբ ամուսնու իրավունքներն են ոտնահարվում): Հասարակության վերաբերմունքն էլ է փոխվել ամուսնալուծված կանանց հանդեպ: Կամ էլ, գնալով ավելի շատ են հանդիպում զույգեր, որոնք միասին են ապրում՝ դեռևս պաշտոնապես ամուսնացած չլինելով: Այս կարգավիճակում անգամ՝ նրանք երեխաներ

են ունենում: Այս երևույթը, որն արևմտյան քաղաքակրթության ազդեցության հետևանքն է, զուտ բարոյական տեսանկյունից վիճահարույց է, սակայն անկասկած ունի իր դրական կողմերը: Արմատապես փոխվել է նաև հասարակական վերաբերմունքը համասեռամուլտերի նկատմամբ. ոմանք սա համարում են դրական փոփոխություն, ոմանք՝ բացասական: Եթե այսպես շարունակվի, ապա մի քանի տարի հետո հավանաբար պաշտոնապես կթույլատրվի հասարակաց տների գործունեությունը, ինչի առթիվ նմանապես միանշանակ բացասական կամ միանշանակ դրական կարծիք չի կարող:

Այն, որ արժեհամակարգը փոփոխվել ու փոփոխվում է, անժխտելի փաստ է: Փաստ է նաև այն, որ այս հարցի շուրջ օբյեկտիվ կարծիք չի կարող, ոմանց համար այդ փոփոխությունը դրական բնույթ ունի, կամ կունենա, մյուսների համար՝ բացասական: Եվ արժեհամակարգի փոփոխման այս գործընթացում իրենց դերն ունեն վերը նշված գործոնները՝ գլոբալիզացիան, ռազմաքաղաքական ուղղվածությունը, աշխարհագրական դիրքը, կրոնական ուղղվածությունը, հասարակական կարգը և սփյուռքը, որոնց կարելի է առանձնացնել մյուս գործոնների շարքից:

Abstracts

Vahram Soghomonyan

Revival of Protestant Culture in Armenia or How to Deal with Freedom

Using a critical approach, the author raises the question of rethinking the current Armenian identity and its main values. This challenge needs a new cultural approach which shall differ from the dominant conservative one. Conservatism is expressed not only by preserving certain internal dependencies and stereotype thinking but also by defending corruption networks etc. The protestant culture and a new critical approach are considered an alternative approach. Elements of these were observed in many fragments of Armenian history and lately in the movements of 60ies, the movement of the 1988 and are also present in nowadays Armenia. First of all, there is a strong contrast between the accepted values and the everyday life. Considering “awareness of injustice” as the main problem of the Armenian society the author compares the Armenian perception of values with European definitions of freedom, rational acting, the sacralization in everyday life, tolerance, self-realization etc. In this regard any limitation of freedom makes the Armenian system of values a low-grade one from a European point of view, but it has even more differences to its eastern neighbouring cultures. A new Armenia-centered protestant culture and a critical approach to the values can help to rethink the Armenian identity and build a new Armenian self-confidence.

Eric Baghdasaryan

Armenia in the Labyrinth of Transformational Identity

The value system formed both in traditional and Soviet conditions eventually loses its competitive power. This is largely fostered by the practice of negating the old and setting it as contrast. The vivid particularity of Armenian identity is “inclination to perpetual search for this identity”. With this it rather resembles general European identity, however with one significant difference: if European identity is constructively apt to understand present and determine future, in our case it is oriented to ignoring present and covering it with past. The state can solve issues related to identity formation and needn't shift this burden to only social or community structures. Identity is a kind of created perception, which must be focused on future. Armenia has an opportunity to form it and come out of the labyrinth of identity search.

Anna Zhamakochoyan

Observation of Armenian Identity in Epic Life-World

The article “Observation of Armenian identity in epic life-world” represents the system of Armenian ethnonational identity and the “We’s” life-world, which is being cocreated by interaction of “We” and “Others”, reflected in “Sasna Tsrer” epos. The components of self perception and “We”-identity which are revealed in characteristics, in actions and interactions of epical heroes, in the rules and laws managing their coexistence are being taken. The observation of epos unveils and describes the attributes that form the life-world of the whole “We”: it is the creation of fireside, the birth of successor, the defence of fireside, the realization and immortalization of father’s preception on the level of “Me”; and the establishment of fatherland, the birth of deserving successors, the fight for defence of the fatherland, and eternal loyalty to traditional norms on the level of “We”.

Gevorg Hakobyan

Critique of Pure Armenian Identity

This article analyses the phenomenon of the so-called pure Armenian Identity. Based on an Aristotelian kind of question “why something is alike another thing”, the writer tries to find out that essential thing in common, that describes the Armenian as Armenian. Being based on several psychological, anthropological, sociological, ethnological and (which is the most important) on

philosophical theories, he purifies the identity as a phenomenon and the value of Armenian identity. The author proposes several paradoxes and provides answers. When analyzing the value both constructivist and substance approaches are used, though they have different views on the issue. According to the question "who is the Armenian?", the reader will find also the paradoxical interior of that pure Armenian identity. Paper is written basing on Spranger, Bem, Smith, Pontalis, Eckhart, Bakalian, Jaloyan and other authors...

Zinaida Salibekyan

The Role of Youth Policy in the Process of Intercultural Communication between Armenia and the European Union

The author is interested in youth policy and her article is about European and Armenian youth policies. She made her research in two dimensions: structural and personal. In structural part the author tries to analyze the activity of youth structures, aimed to create and develop youth policy on different levels. In personal part the author explores the role of cultural aspects, values, and stereotypes, in the frame of communication between European and Armenian youth.

Mariam Movsisyan

Globalization and the Question of Common Values

In this paper the question - if values will become common as a consequence, is discussed. The analyzing of this problem brings to the idea that values are essentially being synthesized, but these values will seem similar only from outward appearance, because all nations tend to constitute themselves and become different from other ones by imposing their identities. Subsequently there is a differentiation and assimilation in the same time. A natural change of values occurs due to the requirement of the time. The new values are crystallized under the influences of old ones. As a consequence, hybrids of values are created which insure the diversity of values.

Hamlet Melkumyan

External Influence and Cultural Transformation in Armenia

The article presents the cultural, political-economical transformations and the peculiarities of transformations of cultural policy in post-soviet Armenia during the new independent existence of the Republic of Armenia. The article further mentions the functional transformations of social normative models in Armenian culture in the transition period which are mainly expressed by the opposition of cultural "open" and "closed" systems. The main task of the article is to show how the choice of cultural values is formed and what kind of social-cultural conditions promote the creation of public values.

Karen Badalyan

Armenia in Pursuit of Changes in the System of Values and the Contributing Factors

Due to new technologies the world eventually becomes "smaller", which stimulates the rapid relocation of values. In case of Armenia, the Armenian Diaspora has a crucial role in the issue of changes affecting the value system. Following the independence of the country, the influx of Diaspora youth to the motherland significantly increased, a part of which settled in Armenia for good. The changes which are currently under way will be more dramatically outlined in 10-20 years time. Some people completely adapt to Armenian customs and culture, whereas others convey new speech and style to our daily life. For instance, nowadays divorces in seemingly traditional Armenia are treated with ease, even though their numbers are growing. The inner order, foreign policy priorities, religious aspects and the role of Diaspora are multiple dimensions of the Armenian identity in a rapidly globalizing world.

Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնը ստեղծվել է 1997-ին: Գործունեության ընթացքում կազմակերպությունն իրականացրել է եվրոպական ինտեգրացիային, իրավական բարեփոխումներին, կրոնական ազատությանն ու էթնիկ փոքրամասնություններին առնչվող բազմաթիվ ծրագրեր: Կենտրոնն այս ընթացքում համագործակցել է Բաց հասարակության ինստիտուտի, ԵԱՀԿ-ի, Եվրախորհրդի Սարդու իրավունքների գլխավոր դեպարտամենտի, Եվրամիության, Հայաստանում ԱՄՆ դեսպանության, Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան եւ այլ կազմակերպությունների հետ:

Collaboration for Democracy Centre was set up in 1997. Since then CFDC implemented a number of projects on issues of European integration, judicial reforms, religious freedom, ethnic minorities and organized a number of round-table meetings, workshops and TV-debates. We have published a series of books, journals and brochures. Over these years CFDC has been cooperating with such organizations as the OSI FA, OSCE, the Council of Europe, the European Union, the Embassy of the Kingdom of Netherlands in Armenia and Georgia, the U.S. Embassy to Armenia and others.



2007-ից կենտրոնը սկսել է հրատարակել «Կրոն և հասարակություն» եռամսյա հանդեսը:

Starting from 2007 CFDC also publishes the quarterly journal “Religion and Society”.